


2018

Միֆուն

95
surh



ՀԱՅ ԱՌԵՏ. ՂԱԼԵՃ



ARMENIAN EVANG. COLLEGE
Mexique Street
P.O.Box 11-3672
RIAD EL SOLH BEIRUT 1107 2140
LEBANON
Tel. (01) 34 98 16

E-mail: secretary@aecbeirut.com.lb

www.aecbeirut.com.lb

المدرسة الارمنية الانجيلية العالية
شارع المكسيك
ص.ب. ١١-٣٦٧٢
رياض الصلح بيروت ١١٠٧ ٢١٤٠
لبنان
هاتف: ٣٤٩٨١٦ (٠١)

بريد الكتروني: secretary@aecbeirut.com.lb

www.aecbeirut.com.lb

ՀԱՅ ԱՐԵՏԱՐԱՆԱԿԱՆ Ա. ԵԿԵՂԵՑԻ



ԵՓՐԵՄ ԵՒ ՄԱՐԹԱ ՓԻԼԻՊՈՍԵԱՆ ՀԱՅ ԱՐԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԳՈԼԷՃ (Հիմնուած 1923-ին)

«ՍԻՓԱՆ»

Տարեգիրք Հայ Աւետարանական Գոլէճի

Կանոնաւորաբար լոյս կը տեսնէ 1959-Էն ի վեր
(նախապէս պարբերաբար լոյս տեսած է մեքենագիր՝ 1940-Էն, իսկ տպագիր՝ 1954-Էն)

Պատասխանատու խմբագիր՝	դոկտ. Արմէն Իւրնէշլեան
Կողքի ձեւաւորում՝	պրն. Վազգէն Մուղալեան եւ օրդ. Հուրի Թեստենեան
Լուսանկարներ՝	պրնք. Հայկ Թէւտիրճեան եւ Լեւոն Պապիկեան, Բաժիններու, յանձնախումբերու եւ ակումբներու պատասխանատու ուսուցիչներ աշակերտներ՝ Մանուէլ Ալաճաճեան եւ Արմէն Գայմագամեան
Հրատարակութիւն՝ Պատասխանատու՝ Էջադրում՝	ՄԱՀԱԵ Միութեան հրատարակչական գրասենեակ տիկ. Ռոզէթ Մահսերեճեան տիկ. Անահիտ Պասէթ
Տպագրութիւն՝	Design Kesdenian
Պէյրուք, Նոյեմբեր 2018	
Տպաքանակ՝ 750	

Յատուկ գնահատանք կ'ուղղենք երեք անհատ բարերարներու,
որոնք մեծագումար նուիրատուութիւններով
դպրոցին յարատեւումին եւ զարգացումին մէջ
ունեցած են եւ կ'ունենան զգալի ներդրում:

Երախտագիտութիւն անոնց ցուցաբերած օժանդակութեան:




Բարերար օրիորդ **ՀՌՈՒԹ ՓԻԼԻՊՈՍԵԱՆ**,
որուն նուիրատութեամբ կառուցուած է ներկայ
դպրոցաշէնքը:

Նախկին աշակերտ, բարերար **ՌԱՖՖԻ
ՄԱՆՈՒԿԵԱՆ**, որ 1995-էն ի վեր հսկայ
ներդրում կ'ունենայ դպրոցի վերելքին:



Նախկին աշակերտ, բարերար **ՀՐԱՉ
ՄԻՍԵՌԵԱՆ**, որ 2001-էն ի վեր մեծապէս
կը նպաստէ դպրոցի զարգացումին:



ԴՈԿՏ. ԱՐՄԵՆ ԻԻՐՆԵՇԼԵԱՆ

Sლოტუ

Ընդհանրապես բոլորս, ժամանակի արժեքին չափանիշը կը ճշդորոշենք տարիներու առատութեամբ կամ քչութեամբ: Ինչ խօսք, որ ճշմարտութեան կորիզ մը կայ այդ մօտեցումին մէջ: Ինքնաբերաբար կ'ենթադրենք, թէ երկար ապրողը (անձ, հաստատութիւն, ազգ եւ այլն), բնականաբար աւելի կենսափորձ կուտակած կ'ըլլայ, հետեւաբար աւելի իմաստուն կը դառնայ, քան՝ սակաւակեացը:

Ինչ որ կ'անգիտանանք յաճախ, այն է, որ հաւասար տարիքի մարդիկ, միշտ չէ որ նոյն կենսափորձը, հետեւաբար նաեւ նոյն իմաստութիւնը կ'ունենան:

Սոյն խոհերը 2020-ի կը դառնան, երբ կը հետեւինք Հայ Աւետարանական Գոլէճի իննսունհինգամեայ երթին: Որոշ չափով նոյնը՝ այլ դպրոցներու հետ, հիմնադրութեան պայմաններու, տեսիլքի ու առաքելութեան իմաստով, բայց էապէս տարբեր՝ 1975-էն ետք հիւսուած իր պատմութեամբ: Այն չարաքաստիկ օրերէն ասդին, երբ Պէյրութ իր վրայ ունեցաւ արեւմտեան ու արեւելեան մակդիրները, անոնց ընկերակցող տխրահոշակ եղելութիւններով ու բեւեռացումներով, ՀԱԳ-ի երթը տարբերեցաւ իր նմաններէն: Երբ չորս այլ հայկական վարժարաններ փակեցին իրենց դռները Արեւմտեան Պէյրութի մէջ, ՀԱԳ մնաց: Տասնհինգ դասարանի համար ունեցաւ հազիւ իննսունմէկ աշակերտ, բայց դիմացաւ: Կռուախնձոր դարձաւ պատերազմող երկու ճակատներու միջեւ, բայց տոկաց: Դիմագրաւեց նիւթական կարիք, բայց գոյատեւեց: Այս սեւեռումով, երբ ժամանակի արժեքը չափենք տարիներու թիւով, ապա քանի՞ով պէտք է բազմապատկուին տազնապալի տարիները: Ահ ու սարսափի, մահուան ու կողոպուտի տարին արդեօք 365 օր ունի, երբ յաճախ այդ օրերէն մին տարուան մը երկարութիւնը ունի, երբ աշակերտներդ տուն ուղարկելու անկարող՝ կը պահես դպրոցիդ նկուղին մէջ, աղօթելով Բարձրեալին անոնց ապահովութեան համար:

Եւ Աստուած պահեց ու կը պահէ Հայ Աւետարանական Գոլէճը: Կը պահէ, որ ան մարմնաւորէ իր հիմնադիրներուն տեսիլքը, որ հիմնական առաքելութեան գիծերէն անդին, դարձած է նաեւ տիպար՝ տոկունութեան, դիմադրականութեան եւ հաւատքի:

Բարի երթ դէպի հարիւրամեակ:

Հայ Աւետ. երկրորդ նախակրթարանի հիմնադրութիւն,
Չոքաք էլ Պլաթի նախկին ամերիկեան տպարանի շէնքին մէջ

Առաջին հունձք՝
8 շրջանաւարտ

1921

Ամերիկեան Միսիոնարական
Պորտ Ընկերութեան Հայուհեաց
Ամերիկեան Վարժարանի
հիմնադրութիւն
(Միս Ուեպի դպրոց)

1922

1923

Հայ Աւետարանական
Մանչերու Բարձրագոյն
Վարժարանի հիմնադրութիւն,
Սուրսոք թաղ

1927

Արուեստից եւ Գիտական
բաժիններու բացում

1960

Լիբանանեան
Ա. պաքալորեայի
դասարան

1959

Կանոնաւորաբար կը սկսի
լոյս տեսնել «Սիփան» տարեգիրքի
առաջին թիւը (պարբերական լոյս
ընծայումը սկսած է 1940-ին՝
մեքենագիր, 1954-ին՝ տպագիր)

1955

Ֆրէշմէն եւ սոփոմոր դասարաններու
աստիճանաբար զիջում
Նորահաստատ Հայկազեան Գոլէճին
(1996-էն՝ Համալսարան)

1953

Աշակերտական ակումբներու
եւ պարբերաթերթերու սկիզբ

1963

Կը նշուի հիմնադրութեան
քառասնամեակը երեք ձեռնարկներով

1964

ՀԱԳ կ'ունենայ իր ամենէն մեծ
շրջանաւարտ դասարանը՝ 51 հոգի

Երկու տարուան կրթական
ծրագիրը կ'ամբողջացուի
մէկ տարուան մէջ

Սկիզբ կ'առնէ Լիբանանի
քաղաքացիական պատերազմը:
Դպրոցը փակ կը մնայ գրեթէ
ամբողջ տարեշրջանին:
Դպրոցի Նորակառոյց շէնքը
կը կրէ լուրջ նիւթական վնասներ

1980

Հիմնադրութիւն
ԱՄՆ-ի Արեւմտ.
Ափի ՀԱԳ
Շրջանաւարտից
միութեան
(Լոս Անճըլըս)

1976-1977

Վաւերագրական ցուցահանդէս
«Հայոց Նպաստը համաշխարհային
քաղաքակրթութեան»

1976

Հիմնադրութիւն ԱՄՆ-ի ՀԱԳ
Ուսանողական միութեան
(Նիւ Ճըրզի)

1975

Դպրոցի շէնքին մէկ մասը
վարձակալութեամբ կը տրուի
Lebanese International College-ին,
մինչեւ 1991

1984

Ապահովական պատճառներով
դպրոցը փակ կը մնայ երկու ամիս եւ
կ'ենթարկուի գաղթականներու հոսքի:
Դպրոցը կը գործէ կրթական
եւ ընկերային խտացեալ ծրագիրով

1985

Լոյս կը տեսնէ
«Լրատու»-ի
առաջին թիւը

2003

3 ձեռնարկներով
կը նշուի
դպրոցի
ութսունամեակը

2000

Կը նշուի դպրոցի
եօթանասունհինգամեակը

1998

Կը կազմուի Տիկնանց
ընկերային յանձնախումբը

1997

Կը վերսկսի աշակերտական
ստեղծագործութիւններու
տարեկան ցուցահանդէսի
աւանդոյթը

2008

Փառաշուք հանդիսութեամբ
կը նշուի դպրոցի
ութսունհինգամեակը UNESCO-ի մէջ

2011

2013

Ճաշկերոյթով, ցուցահանդէսով
եւ Նուագահանդէսով
կը նշուի դպրոցի ինսունամեակը

Հիմնադրութիւն Պէյրութի
Շրջանաւարտից միութեան

1930

Դպրոցը, որ միայն մանչերու
երկրորդական վարժարան էր,
կ'ունենայ նաեւ նախակրթարան,
Հայ Աւետ. երկրորդ նախակրթարանին
միացումով, անշատ վայրի մէջ,
մինչեւ Մեքսիք փողոց փոխադրուիլը

1932

1933

Դպրոցը կ'ըլլայ երկսեռ
բարձրագոյն վարժարան
(Հայուհեաց ամերիկեան
վարժարանին միացումով)

1943

Դպրոցը կը դառնայ
սեփականութիւնը
Հայ Աւետ. Ա. Եկեղեցիին

1952

Փոխադրութիւն ու
հաստատում
Հայ Աւետ. Ա. Եկեղեցւոյ
կից իր ներկայ վայրը,
Մեքսիք փողոց

1950

Դպրոցի անուանում՝
Հայ Աւետարանական Գոլէճ

1948

Ֆրէշմէն Եւ սոֆոմոր դասարաններու
հաստատումով դպրոցը ձեռք կը ձգէ
գոլէճի մակարդակ

1967

Տնօրէն կը նշանակուի
Դրոկոտ. Չաւէն Մսրըլեան,
մինչեւ 2017

1969

ՀԱԳ կը փոխադրուի իր նորակառոյց
(ներկայի) շէնքը, որ իրականութիւն
դարձած էր գլխաւոր
բարերարութեամբ Օր. Հռութ Փիլիպպոսեանի:
(Ճարտարապետ՝ Միքայէլ Եուսուֆեան)

1970

Կը կազմակերպուի
Լիբանանահայ
մշակոյթի շաբաթը

Հիմնարկէք
ներկայ շէնքին

1974

Դպրոցը կ'արձանագրէ
աշակերտութեան ամենաբարձր
թիւը՝ 796 հոգի:

1972

Կը կազմակերպուի
«Սփիւռքը այսօր»
կրթողային ցուցահանդէսը

Մարտէն Յունիս դասերու ընդմիջում
ապահովական պատճառներով,
բացի պաքալորեայի դասարանէն

Ծնողական մարմինի
առաջին ընտրութիւն

1989

Դպրոցաշէնքը կ'ենթարկուի
ռմբակոծութեան

14 - 27 Ապրիլ, դպրոցին մէջ
կ'ապաստանին Լիբանանի
հարաւային շրջաններէ
480 գաղթականներ

1991

Դպրոցը կ'արձանագրէ
իր աշակերտութեան
նուագագոյն թիւը՝ 91 հոգի

1994

Կը կազմուի
Լիբանանի Շրջանաւարտից
գործադիր մարմինը

1996

Կը կազմուի
Տիկնանց օժանդակ մարմինը

Կը նշուի
դպրոցի եօթանասունամեակը

Վաւերագրական ցուցահանդէս
«Հայոց պատմութեան
յարդական երթը
ԶԱ 2492 - 2016»

Դպրոցը կ'ունենայ
իր համացանցի կայքը՝
www.aecbeirut.edu.lb

Հիմնադրութեան
95ամեակի նշում

2016

2017

Կը նշուի Դրոկոտ. Չաւէն Մսրըլեանի
տնօրէնութեան
յիսնամեայ յոբելեանը

2018





2 017-2018 տարեշրջանին ՀԱԳ-ի աշակերտներուն հոգեւոր դաստիարակութեան պատասխանատուներն էին վեր. Հրայր Զոլագեան (Հայ Աւետ. Ա. եկեղեցիի հովիւ) եւ Տիկ. Հռութ Եունիսէս (Աստուածաշունչի դասատու, Նախակրթարանի պաշտամունքներու համադրող եւ Ս. Գիրքի ակումբի խորհրդատու):

ԱՌԱՐՈՏԵԱՆ ՊԱՇՏԱՍՈՒՆՔՆԵՐ

ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ

Մանկապարտեզի մանուկները իրենց պաշտամունքները ունեցան շաբաթը 4 անգամ, որոնց ընթացքին սորվեցան Աստուածաշունչի պատմութիւններ, հայերէն եւ անգլերէն երգեր ու աղօթքներ, ինչպէս նաեւ ձեռային աշխատանքներ ըրին այդ պատմութիւններուն առնչուած:

ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ

Նախակրթարանի աշակերտները շաբաթը 3 անգամ պաշտամունքով սկսան իրենց դպրոցական օրը: Ամէն երկուշաբթի ունեցան երգեցողութեան պահ, ուր սորվեցան Նոր հոգեւոր երգեր՝ հայերէն եւ անգլերէն: Պաշտամունքի պահերու հիւր պատգամաբերներն էին՝ տիկ. Նայր Մարալ Հայտօսթեան, Վերա Հատտատ, Հռութ Եունիսէս, Սոնա Մուղալեան, Յոլեր Քէշիշեան, Նայիրի Նոիրա եւ Չարմինէ Ասմինեան. օրհորդներ Կասիա Գազանճեան, Վարդուկ Ֆռնրգեան, Կարին Հայտօսթեան, Դալար Հայտօսթեան, Արտա Գերպապեան, Նայիրի Մարլեան, Քրիսթին Քէշիշեան, Մարիա Խաչատուրեան, Սթեֆանի Արսլանեան, Լիա Գասպարեան, ինչպէս նաեւ տեարք Ասատուր Մնչերեան, Շանթ Ակիշեան եւ Լեւոն Պապիկեան:

Շնորհակալութիւն բոլորին եւ յատկապէս Տիկ. Վերա Հատտատի եւ Օրդ. Կասիա Գազանճեանի, որոնք շարունակական հոգեւոր պատմութիւններ պատմեցին:

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ

Միջնակարգի եւ Երկրորդականի աշակերտները նաեւ շաբաթը 3 անգամ իրենց օրը սկսան պաշտամունքով: Պաշտամունքի պատգամաբերներն էին՝ վեր. Հրայր Զոլագեան, վեր. դոկտ. Փօլ Հայտօսթեան, վեր. դոկտ. Լայրլ Արմաթրոնկ, դոկտ. Արմէն Իւրնէշեան, դոկտ. Ռիմա Վան Սասն, դոկտ. Արտա Էքմէքճի, դոկտ. Չաւէն Մարլեան, վեր. Սողոմոն Քիլադպեան, վեր. Ռաֆֆի Մարլեան, վեր. Նապիլ Մա՛ամարպաշի, Տ. Մկրտիչ քիւյ. Քէշիշեան, Տ. Սեպուհ վրդ. Կարապետեան, պատ. Տաթև Պասմաճեան, պատ. Սեւակ Թրաշեան, տիկ. Նայր Եսթեր Քիլադպեան, Մարալ Հայտօսթեան, Մարալ Տէրմենճեան, Վերա Հատտատ,

Նատա Հատտատ, Կարինէ Զոլագեան, Մարիա Ռահպանի, Անգինէ Օպէյտ, Նուարդ Ղորղորեան, Յոլեր Քէշիշեան, Սիլվա Սայիլեան, Լենա Պաղտոյեան, Ալին Տէմիրճեան, օրհորդներ Սոնիա Սիսլեան եւ Վարդուկ Պալրգճեան, տեարք Նժդէհ Միսսեան, Գրիգոր Էլմայեան, Թոմ Հոկլընտ եւ Ռիսամ Հատտատ:



Վեր. ՀՐԱՅՐ ԶՈԼԱԳԵԱՆ

Յատուկ շնորհակալութիւն կը յայտնենք տիկ. Եսթեր Քիլադպեանին, որ ամէն երկամսեակ մէկ երգեցողութեան պահ առաջնորդեց:

Մեծապէս կը գնահատենք Աստուածաշունչի ակումբի վարչութեան եւ պատանեացի անդամներուն ծառայութիւնը պաշտամունքի պահերուն՝ երգեցողութեամբ, առաջնորդութեամբ եւ այլ ձեւերով:

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՅԻ ԴԱՍԵՐ

Աստուածաշունչի բաժանմունքը կը հետեւի Հայ աւետարանական վարժարաններու Կրթթական խորհուրդին կողմէ ճշդուած ծրագրին:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆՆԵՐ

26 Սեպտեմբեր 2017 - Վերամուտի միացեալ պաշտամունքով սկսանք 2017-2018 տարեշրջանը, Աստուծոյ առաջնորդութիւնը եւ հոգատարութիւնը խնդրելով դպրոցիս աշակերտութեան, ուսուցչակազմին եւ պաշտօնեւորեան համար:

4 Հոկտեմբեր 2017-ի պաշտամունքին, ամառուան ընթացքին Զ.Զ. Ընկերակցութեան զանազան համագումարներու մասնակցած աշակերտներ բաժնեկցեցան իրենց փորձառութիւնները եւ տպաւորութիւնները, ապա հրաւեր ուղղուեցաւ բոլոր աշակերտներուն, որպէսզի մասնակցին եկեղեցիիս Պատանեաց խումբին:

10 Դեկտեմբեր 2017 - Աշակերտութիւնը սկսաւ ընդդէմ եւ տուփեղէն ուտելիքներ հաւաքել, որպէսզի Դեկտեմբերի վերջը անոնք դրկուին Հայ Աւետ. Ընկերային Ծառայութեան կեդրոն, ուրկէ բաժնուեցան կարօտեալ ընտանիքներու:

15 Դեկտեմբեր 2017 – Նախակրթարանի աշակերտները ներկայ եղան “Go tell it to others” ներկայացումին, պատրաստուած Hi Kids խումբին կողմէ: Աւարտին աշակերտներուն բաժնուեցան գրքոյկներ, որպէսզի իրենք ալ իրենց կարգին ուրիշներու պատմեն Յիսուսի ծննդեան բարի լուրը:

20 Դեկտեմբեր 2017 – Նախակրթարանի աշակերտները դիտեցին “The Star” ֆիլմը, որ Յիսուսի ծննդեան պատմութիւնը կը պատմէ, եւ անգամ մը եւս անդրադարձան Աստուծոյ սիրոյն մասին:

21 Դեկտեմբեր 2017 – Ս. Ծննդեան տօնին առիթով կազմակերպուած մանկապարտեզի հաւաքոյթին, մանուկներ իրենց երգերով եւ candy cain-ի հեքեաթին կարճ թատրոնով աւետեցին Աստուծոյ գերագոյն սերը:

22 Դեկտեմբեր 2017 – ՀԱԳ-ի բոլոր աշակերտները եւ ամբողջ ուսուցչակազմը միացեալ պաշտամունքի մը ներկայ եղան, որուն ընթացքին աշակերտներ իրենց բաժինը բերին երգերով եւ կարճ խորհրդածութիւններով: Օրուայ պատգամաբերներն էին վեր. եւ տիկ. Հրայր եւ Կարինէ Չոլագեանները:

29 Դեկտեմբեր 2017 – ՀԱԳ-ի Աստուածաշունչի ակումբի անդամները, միանալով աւետարանական քոյր վարժարաններու Աստուածաշունչի ակումբի անդամներուն, կազմակերպեցին միօրեայ գործունեութիւն մը Հայ Աւետ. Ընկերային Ծառայութեան կեդրոն յաճախող մանուկներուն համար: Անոնք միասին խաղցան, երգեցին եւ Կաղանդ պապային ընկերակցութեամբ նուէրները բաժնեցին:

16-17 Փետրուար 2018 – Աշակերտները մասնակցեցան Աստուածաշունչի ակումբի եւ Պատանեացի կողմէ կազմակերպուած միօրեայ համագումարին, որուն նիւթն էր «Վստահութիւն առ Աստուած»:

19-28 Փետրուար 2018 – Միջնակարգի եւ երկրորդականի աշակերտները իրենց պաշտամունքի պահուն դիտեցին “Ultimate Gift” ֆիլմը:

20 Մարտ 2018 – Նախակրթարանի աշակերտները իրենց սիրայօժար նիւթական նուէրները բերին, որոնցմով պատրաստուեցան 20 ուտեստեղէնի տուփեր եւ դրկուեցան Հայ Աւետ. Ընկերային Ծառայութեան կեդ-

րոն, որպէսզի բաժնուին կարօտեալ ընտանիքներու:

28 Մարտ 2018 – Աշակերտները եւ ուսուցչակազմը դարձեալ միասին հաւաքուեցան, որպէսզի Յարութեան տօնը նշեն: Աստուածաշունչի յանձնախումբը կազմակերպած էր այս պաշտամունքը, որուն բաժին բերին զանազան աշակերտներ:

15 Մարտ 2018 – Նախակրթարանը ներկայ եղաւ տիկին Թամար Ալպարեանի հոգեւոր եւ դաստիարակչական բնոյթի մանկապատանեկան երգերու ելոյթին, Հայ Աւետ. Կեդրոնական Բարձրագոյն Վարժարանին մէջ:

16 Մարտ 2018 – Նախակրթարանի աշակերտները դարձեալ վայելեցին Hi Kids խումբը, որ այս անգամ ներկայացուց Աստուածաշունչը, թէ անիկա որքա՞ն հրաշալի գիրք մըն է, պատմութիւններով լեցուն: Ետքը աշակերտներուն բաժնուեցաւ Bible App-ը եւ բացատրուեցաւ, թէ ինչպէս կրնան օգտագործել զայն:

13 Ապրիլ 2018 – Օրդ. Կասիա Գազանճեան սկսաւ պատմել “Emmie” շարունակական պատմութիւնը, ապա աշակերտները իրենց տպաւորութիւնները գծեցին եւ գրեցին (որոնք կրնաք գտնել «Չուարթնոց»-ի 2018-ի թիւին մէջ):

14 Մայիս 2018 – Օրդ. Թալին Մարտիրոսեան ներկայ եղաւ պաշտամունքին եւ զնահատեց աշակերտներուն սիրայօժար նուիրատուութիւնը Ս. Ծնունդի եւ Ս. Չատկուայ շրջանին՝ կարօտեալ ընտանիքներու:

ԶԵԿՈՒՅԱՏԱԽՏԱԿՆԵՐ

Տարուան ընթացքին՝ ամսական դրութեամբ, դպրոցիս մուտքի եւ յարկերու 3 զեկուցատախտակներ զարդարուեցան Աստուածաշունչի համարներով եւ քաջալերական խօսքերով, որոնց նպատակն էր քաջալերել աշակերտները եւ ամրապնդել անոնց սորված հոգեւոր սկզբունքները:

Նոյն նպատակով, միջնակարգի եւ երկրորդականի աշակերտները դպրոցի պաշտամունքներուն, ամիսը մէկ Աստուածաշունչէն համար մը անգիր սորվեցան, որպէս այդ ամսուայ նշանաբան:

Երախտագիտութեամբ կը յիշենք այս բոլոր գործունեութիւնները, որոնք կատարուեցան Աստուծոյ անուան փառքին համար ու կը հաւատանք, թէ «ան որ մեր մէջ բարի գործ մը սկսաւ, մինչեւ Յիսուս Զրիստոսին օրը պիտի կատարէ»:

Հ. ԵՌԵՆԻՍԵՍ



ԴՈԿՏ. ԶԱԻԵՆ ՄԱՐԻԵԱՆ
Պատուակալ Տնօրեն



ՏԻԿ. ԳԱՐՈՒԽՆ ԱՆԹՈՒՆԵԱՆ
Մանկապարտեզ



ՏԻԿ. ԶԱՐՄԻՆԷ ԱՍՄԻՆԵԱՆ
Հայերեն



Պրն. ՎԱԶԳԵՆ ԲԻԺԱՆԴԵԱՆ
Թուաբանություն



ՏԻԿ. ՀՈՒՐԻ ԳԱՅՄԱԳԱՄԵԱՆ
Անգլերեն



ՏԻԿ. ՀՈՒՐԻ ԵՈՒՆԻՍԵՆ
Կրթություն



ՏԻԿ. ՆԱՂԱՄԱԹ ԷԼ ԽԱԹԻՊ
Արաբերեն



Պրն. ՄԸՀՏԻ ԷԼ ՀԻԼԼԱՆԻ
Թուաբանություն



Պրն. ԼԵՄԻՀ ԷԼ ՀՈՐ
Արաբերեն



Պրն. ՄՈՒՍԹԱՖԱ ԹԱՍՍԻ
Բնագիտություն



Օրդ. ՅԱՄՍԻԿ ԹՈՐՈՍԵԱՆ
Մանկապարտիզականուհի



Տիկ. ՆՈՒԿՐԴ ՂՈՐՂՈՐԵԱՆ
Գիտություն
Կենսաբանություն



Տիկ. ԼԵՆԱ ՄԻԿՏԵՍԵՐԵԱՆ
Ֆրանսերեն



Պրն. ՆՇԴԵՀ ՄԻՍԵԱՆ
Բնագիտություն
Թուաբանություն



Տիկ. ՍՈՆԱ ՄՈՒՂԱԼԵԱՆ
Արաբերեն



Պրն. ՎԱԶԳԵՆ ՄՈՒՂԱԼԵԱՆ
Գծագրություն
Ձեռարուեստ



Տիկ. ՏՈՒՆԻԱ ՆԱ՝ԱՅՍԵ
Փիլիսոփայություն



Տիկ. ՆԱՅԻՐԻ ՆՈՀՐԱ
Անգլերեն



Պրն. ՍԵՊՈՒՀ ՊԱՊԻԿԵԱՆ
Մաթեմատիկա



Տիկ. ԱՆԻ ՊԻԼԱԼԵԱՆ
Հայերեն, Հայոց պատմություն



Պրն. ՀԱՆՆԱ ՊՇԱՐԱ
Արաբ. աշխարհագրություն
եւ պատմություն



Տիկ. ՌՈԶ ՊՈՒԵՅՐԻ
Քաղ. կրթություն
Արաբ. պատմ. - աշխ.



Տիկ. ՄԱՐԻԱ ՌԱՀՊԱՆԻ
Արաբերեն



Տիկ. ԺԱՄԱԼ ՈՎՇԻՏԻ
Կենսաբանություն



Տիկ. ՅԱՄՄԻԿ ՏԵՄԻՐՃԵԱՆ
Գիտություն
Տարրալուծարանի պատասխանատու



Տիկ. ԹԱԼԻՆ ՏԱՆԱԿԵՕՉԵԱՆ
Տնտեսագիտություն
Ընկերաբանություն



Տիկ. ԼԵՅԼԱ ՏԱՐՈՒԻՇ
Քիմիագիտություն



Օրդ. ԹԱԼԻՆ
ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
Մանկապարտեզ



Տիկ. ՆԵԿՏԱՐ ՓԱԼԱՉԵԱՆ
Երգ



Պրն. ՀԱՅԿ ԲԵՆՏԻՐՃԵԱՆ
Անգլերեն



Տիկ. ՑՈԼԵՐ ԲԵՇԻՇԵԱՆ
Թուրքաբանություն



Տիկ. ԱՆԳԻԼԵ ՕՊԵՅՏ
Անգլերեն Համադրող



Օրդ. ԿԱՐԴՈՒԿ ՖՈՆԸՉԵԱՆ
Հայերեն



Տիկ. ԼԱՐԱ ԳԱՐԱՄԱՆԼՅԱՆ
Հաշուապահ



Տիկ. ԿԵՐԱ ՀԱՄԱՆԸԵԱՆ
Քարտուղար



Տիկ. ԿԱՐԻՆԷ ԱԶԵՄԵԱՆ
Գրադարանավար



ՀՈԳԱՏԱՐՆԵՐ

Գոհար Պատաքեան
Մահա Այուկ
Անիսէ Սարաւետոյիս
Նազելի Նիկոլեան



ԿԱՐՈՐԴՆԵՐ

Բենո Կարապետեան
Կարո Հայրապետեան
Կարո Պողոսեան
Ժիրայր Պերպերեան
Խաչիկ Շահինեան

Բացակայ՝ Յարութ Պալի
Սուհեյլ Սարաւետոյիս



Աւօ Շերպերճեան
Արշակ Աննայեան



REDA ATOUI

Hardship is the main
motive of success



ՓԵՐԼԱ ՊԱՍԵԹ

Սիրէ՛ անձդ,
Որ սիրես հայրենիքը,
Որ սիրես ուրիշը,
Որ Սիրես՝ս...
Ի՞նչ է մեզմէ ուզուածը
Բացի սիրելէ...



ԳԱԹՐԻՆԱ
ՏՈՒՄԱՆԵԱՆ

Հերոսութիւն
կարելի է գործել
առանց հերոս ըլլալու



ԿԵՐԻ ԼԵՓԵՃԵԱՆ

Յոյսով
ամէն բան կարելի է



ՍԵՐԺ ԹԵՐՉԵԱՆ

Ինքնաճանաչումը
իմաստութեան
սկիզբն է



ԺԱ. դասարան

Դաստիարակ՝ Պրն. Մըհտի Էլ Հիլլանի

Ա. շարք

Վանա Սերայտարեան
Սանտրա Պասեթ

Բ. շարք

Սամուէլ Հալաճեան
Աւօ Գոնիպլեան

Ժ. դասարան

Դաստիարակ՝ Տիկ. Նուարդ Դորդորեան



Ա. շարք

Ալէն Արաքսէիսեան
Գարլա Պասթաճեան
Կարին Տէմիրճեան
Կերի Զէյթունցեան

Բ. շարք

Անթոնի Օպէյտ
Հըսէյն ալ Օմէյրի
Մանուէլ Ալաճաճեան



Թ. դասարան

Դաստիարակ՝ Տիկ. Անի Պիլալեան

Ա. շարք

Գառնի Զեօշկերեան
Սեփն Համմուտ
Այգ Արզումանեան

Բ. շարք

Նարինե Պասթաճեան
Եարա Եունես
Աւօ Տերտերեան
Արիժ Սիտանի

Ը. դասարան

Դաստիարակ՝ Տիկ. Հռութ Եունիսես

Ա. շարք

Փաթրիսիա Ապաճեան
Նարե Գարամանուկեան
Լոռի Զեօշկերեան

Բ. շարք

Էլվիրա Չեթունցեան
Նոյեմի Պօղոսեան

Գ. շարք

Կերի Կարօ Պաշըգճեան
Արմեն Գայմագամեան



Է. դասարան

Դաստիարակ՝ Տիկ. Մարիա Ռահպանի



Ա. շարք

Բ. շարք

Եղևթ Եղևես
Գրիգոր Միլասեան
Տէնի Ակոբճեան
Յակոբ Գալուստեան

Էնտրիւ Նազարեան
Լոռի Գալուստեան
Գեորգ Պասթաճեան
Քարիմ Եղևես



Ը. դասարան

Դաստիարակ՝ Տիկ. Նա'ամաթ Էլ Խաթիպ

Ա. շարք

Սերլի Ինճեան
Նժդէի Պալեան

Բ. շարք

Արմինէ Բէշիշեան
Մանէ Զոլագեան
Ղազար Մեսճեան



Ե. դասարան

Դաստիարակ՝ Տիկ. Ցուլեր Բեչիշեան

Ա. շարք

Լորա Սայիլեան
Սերլի-Ռոզի Շահինեան
Արին Պասթաճեան

Բ. շարք

Քրիստափոր Ալեմեգեան
Դալար Տագեսեան
Սերլի Հատտատ
Միամմատ Համմուտ

Գ. շարք

Լանա Սայիլեան
Կրեյս Հալաճեան

Դ. դասարան

Դաստիարակ՝ Տիկ. Նայիրի Նոիրա



Ա. շարք

Գեորգ Ապաճեան
Սերենա Այնթապլեան
Արտա Գրիգորեան
Նոյեմի Ֆրանսիս

Բ. շարք

Վահե Միքայելեան
Անտրեա Տեմիրճեան
Ալիք Կարապետեան
Էտըմ Նազարեան

Գ. շարք

Քրիսթինա Ճոզիկեան
Մարի-Լիսի Մասսա

Գ. դասարան

Դաստիարակ՝ Տիկ. Չարմինե Ասմինեան



Ա. շարք

Բ. շարք

Գ. շարք

Մարիա Պողոսեան
Նարոտ Գարամանուկեան
Նարեկ Չոլագեան
Մարիա Էլմաճեան

Ալեքս Ճոզիկեան
Սելին Արաքսէիսեան
Լիանա Շահինեան
Իսա Սալիա

Վարդան Աւեսեան
Մարիլին Պալեան
Կարին Ալեքմեզեան

Բ. դասարան

Դաստիարակ՝ Տիկ. Սոնա Մուղալեան



Ա. շարք


Բ. շարք

Ռազմիկ Ինճեան
Սելին Աստուրեան
Չօհրապ Թերզեան
Միրա Ղորղորեան
Անտրեա Աբրահամեան

Մարիանա Փասօա տի Սիլվա
Ճուտի Ֆարսաքուրի
Ռազմիկ Մեսճեան
Ֆապիօ Միրիճանեան

Ա. դասարան

Դաստիարակ՝ Օրդ. Վարդուկ Ֆնըզեան



Ա. շարք

Ալիք Ֆերմանեան
Տարոն Գոճայեան
Մարիա Ճոզիկեան
Գայիանէ Շեքերճեան
Վահան Աւեսեան

Բ. շարք

Գլարա Նոկուէրա Անթունէ
Սերլի Շերպեճեան
Հրակ Կարապետեան
Կասիա Քէշիշեան
Կապրիէլա Նոիրա

ԾԱՂԻԿ դասարան

Դաստիարակ՝ Օրդ. Յասմիկ Թորոսեան



Նարի Քեօշկերեան
Ռաֆայէլ Ֆրանսիս
Նաթալի Նասիֆ

Ճիովանի Սալպաշեան
Լուսա Քէշիշեան

Սեւակ Ինէճեան
Վանի Նորշահեան

ԿՈԿՈՆ դասարան

Դաստիարակ՝ Օրդ. Թալին Տեր Կարապետյան



Ժագլին Կարապետյան
Սերենա Հատտատ
Հրակ Թերզյան

Քամի Սաչլեան
Ռիթա Մարիա Պաշքյան

ԲՈՂԲՈՋ դասարան

Դաստիարակ՝ Օրդ. Գարոլին Անթունյան



Սինթիա Տարազյան
Թամարա Նասիֆ
Էմմանուել Միքայելյան
Կապրիել Գույումճյան
Յովկան ժամկոչյան

Սոֆի Նոիրա
Արին Ֆերմանյան
Վրեժ Կոբարյան
Էնժի Աբրահամյան
Դանիել Թիվրինյան









Աշակերտներուն արտադասարանային հմտութիւնները զարգացնելու համար, Երկրորդական բաժինին մէջ շաբաթական դրութեամբ կազմակերպուեցան ատենամարզանքներ:

Ատենամարզանքի յանձնախումբի անդամներն են՝ տիկնայք Անի Պիլալեան (համադրող), Նուարդ Ղորղորեան, Հռութ Եունիսէս եւ պր. Նժդէհ Միսսեան, որոնք տնօրէնին հետ համախորհուրդ կը պատրաստեն ատենամարզանքի ծրագիրը:

Ստորեւ կը ներկայացնենք 2017-2018 կրթական տարեշրջանի երկրորդականի ատենամարզանքներու ամփոփ տեղեկագիրը, պատրաստուած տիկ. Անի Պիլալեանի կողմէ:

Սեպտեմբեր 29 *Տնօրէն դոկտ. Արմէն Իւրնէշլեան ներկայացուց եւ բացատրեց դպրոցի կրթական եւ կարգապահական օրէնքները: Ան նաեւ անդրադարձաւ աշակերտներու պարտաւորութիւններուն, դպրոցին, համայնքին եւ ընկերութեան հանդէպ:*

Հոկտեմբեր 6 *Խումբ մը աշակերտներ, որոնք ամրան այցելած էին Հայաստան եւ Արցախ, տեսաերիզով իրենց տպաւորութիւնները փոխանցեցին, ինչպէս նաեւ շեշտեցին հայրենիքի գեղեցկութիւնն ու արժէքը:*

Հոկտեմբեր 13 *Թարգմանչաց տօն: Օրուան բանախօսն էր տիկ. Արին Գալուստեան: Տեղի ունեցաւ գեղարուեստական յայտագիր. ասմունք՝ Նայելի Մարգէեան, նուագ՝ Այգ Արզումանեան (դաշնամուր) եւ Կարին Տեմիրճեան (ջութակ):*



Հոկտեմբեր 20 *Պարոն Նժդէհ Միսսեան Բառ-խաղի մրցում մը կազմակերպած էր: Աշակերտները մեծ հաճոյքով իրենց մասնակցութիւնը բերին: Աշակերտներ խումբերու բաժնուեցան եւ ապա առաջնութիւնը յայտարարուեցաւ:*

Հոկտեմբեր 27 *Առաջին եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ Բարեկարգութեան շարժումի 500-ամեակի նշում, մասնակցութեամբ Հայ աւետարանական բոլոր վարժարաններուն: Պատգամը փոխանցեց տիկին Եսթեր Քիլադպեան: Տեղի ունեցաւ գեղարուեստական յայտագիր: Երգչախումբը հոգեւոր երգերով իր մասնակցութիւնը բերաւ: ՀԱԳ-Էն նուագեցին Այգ Արզումանեան եւ Կարին Տեմիրճեան:*



Նոյեմբեր 3 *Տիկին Նուարդ Ղորղորեան մրցում-խաղ կազմակերպած էր, նիւթ ունենալով «Հանրային առողջապահութիւն»-ը: Աշակերտները խումբերու բաժնուեցան եւ ապա առաջնութիւնը յայտարարուեցաւ:*

Նոյեմբեր 10

Հայ Աւետարանական Գոլէճի «Հիմնադիրներու օր»: Այս աւանդական ատենամարզանքին պատգամը փոխանցեցին շրջանաւարտներ Նայիրի Զիւրտեան-Սաչլեան (2001) եւ Վարանդ Զիւրքճեան (2007):



Նոյեմբեր 17

Դոկտ. Կարօ Փիլաւճեան եւ իր մասնագիտական խումբը իւրայատուկ վարժանք մը ներկայացուցին ռոպորթիքսի մասին: Իրենց մասնակցութիւնը բերին 6-էն 12-րդ դասարանի աշակերտները: Հիւր խումբը տեսաերիզով եւ գործնական ցուցմունքներով բացատրութիւններ տուաւ ռոպորթիքսի մասին: Ապա աշակերտներուն տրամադրուեցան ռոպորթիքսի յատուկ բաղկացուցիչ կտորներ, որոնցմով անոնք կազմեցին ռոպորթներու մասեր:


Նոյեմբեր 24

Լիբանանի անկախութեան օրուան նշում: Աշակերտներ Լիբանանի դրօշակը պատրաստեցին, ապա հիւր սպաներու հետ խմբային նկար առնուեցաւ: Աշակերտները հիւրասիրուեցան լիբանանեան աւանդական ուտելիքներով, ինչպէս նաեւ՝ լիբանանեան աւանդական խաղեր խաղացին, դպրոցի բակը, ապա ուղղուեցան սրահ: Բացման խօսքը արտասանեց Փերլա Պասեթ: 6-րդ դասարանի աշակերտներ արաբերէն երգերով ելոյթ ունեցան: Ապա լիբանանեան բանակի հարիւրապետ Միշէլ Սարժի տեսաերիզով բանակի պատմական ու արժէքը ներկայացուց: Վարժարանիս արաբերէն գրականութեան ուսուցիչը ասմունքով մը հանդէս եկաւ: Ձեռնարկի աւարտին տնօրէնը յուշատախտակ մը յանձնեց սպային: Ատենամարզանքի համադրող ուսուցչուհին Է տիկին Մարիա Ռահպանի:



Փետրուար 16

Ինքնաշարժի արկածներու նախազգուշացման ցուցմունքներ: Նիւթը ներկայացուց «ՍԷՅՖըր» կազմակերպութիւնը:



Փետրուար 23

Անհատական զարգացման մրցում: Փերլա Պասեթ առաջին հանդիսացաւ: Համակարգող ուսուցիչն էր պարոն Նժդէհ Մխսեան:



Մարտ 2

Ուսուցչաց տօնին առիթով ատենամարզանք պատրաստուած 11-րդ եւ 12-րդ դասարաններուն կողմէ: Հսկող ուսուցչուհի՝ տիկին Անգինէ Օպէյտ:

Մարտ 16

Հրապարակախօսութեան արուեստի հմտութիւններու մասին հանդէս եկաւ բեմադրիչ պարոն Վարդան Մկրտիչեան:

Մարտ 23

Աշակերտական անհատական անպատրաստից գեկոյցներ զանազան նիւթերու մասին: Պատրաստութիւն՝ դոկտ. Արմէն Իւրնէշլեանի: Անթօնի Օպէյտ հանդիսացաւ առաջին:

Մարտ 28

Ս. Չատկուան առիթով կազմակերպուած խաղեր: Պատրաստութիւն՝ տիկին Հռութ Եունիսէսի եւ պարոն Նժդէհ Մխսեանի:

Ապրիլ 13

Ս. Չատկուան առիթով, տիկին Ռիթա Գազէզեան կարկանդակ զարդարեց եւ աշակերտութեան փոխանցեց յաջող զարդարանքի գաղտնիքները: Աւարտին, աշակերտներ հիւրասիրուեցան համեղ կարկանդակով:



17 Ապրիլ 20

Կլոր սեղան, Հայ Դատի առնչութեամբ աշակերտներու պարտականութիւններուն մասին: Տիկին Անի Էքմէքճեան-Պիլալեան պատրաստած էր տարբեր բնոյթի նիւթեր՝ օրուան պատգամը ընդգրկող: Աշակերտներուն առիթ տրուեցաւ մտքերու փոխանակում կատարելու:

Ապրիլ 27

Կարգ մը աշակերտներ մնջկատակով փորձեցին ներկայացնել իրենց փոխանցուած կերպարը, մինչ ուրիշներ փորձեցին բացայայտել այդ դերերը:

Մայիս 11

Երաժշտական տաղանդի մրցում: Հետեւեալ աշակերտները իրենց մասնակցութիւնը բերին մրցոյթին. Վահան Աւեսեան (դաշնամուր), Ռազմիկ Մեսճեան (կիթառ), Նարեկ Չոլագեան (դաշնամուր), Լիանա Շահինեան (դաշնամուր), Վարդան Աւեսեան (դաշնամուր), Վահէ Միքայէլեան (ջութակ), Անտրէա Տէմիրճեան (ջութակ), Արտա Գրիգորեան (դաշնամուր), Լորա Սայիլեան (ջութակ), Սերլի Հատտատ (ջութակ), Լանա Սայիլեան (դաշնամուր), Մանէ Չոլագեան (դաշնամուր), Արմինէ Քէշիշեան (ջութակ), Ղազար Մեսճեան (կիթառ), Նժդէհ Պալեան (դաշնամուր), Լոռի Գալուստեան (դաշնամուր), Կարին Տէմիրճեան (ջութակ): Լիբանանի ֆիլիարմոնիք նուագախումբի խմբավար մայեսթրօ Կարօ Աւեսեան (1998ի շրջանաւարտ), նուագողներէն ընտրեց Սոնա Ահարոնեան երաժշտական մրցանակի յաղթող աշակերտները:



Մայիս 18

Միացեալ ատենամարզանքը նուիրուած էր Հայաստանի Ա. Հանրապետութեան հարիւրամեակին: Բացման խօսքը կատարեց տիկին Անի Էքմէքճեան-Պիլալեան: Գեղարուեստական յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին նախակրթարանի եւ միջնակարգի աշակերտներ՝ խմբային ասմունքով եւ նուագով: Տուցադրուեցաւ Այգ Արզումանեանի կողմէ պատրաստուած պաստառը, որ կը խորհրդանշէր օրուան թեման:

ՅոԼՆԻՍ 1

Խմբային խաղեր, կազմակերպուած տիկին Հռութ Եունիսէսի կողմէ:

2017 - 2018-ի ԼՐԱՏՈՒՆԵՐՔ



Նախակրթարանի աշակերտները անհամբերությամբ կը սպասեն ատենամարզանքի պահերուն, որոնք տեղի կ'ունենան Ուրբաթ օրերը, վերջին դասապահուն: Դաստիարակ ուսուցիչներու կողմէ կազմակերպուած յայտագիրներուն մաս կը կազմեն աշակերտները, երգերով, ասմունքով նաեւ ընթերցումով: Կ'ունենանք նաեւ հիւրեր, որոնք աշակերտներուն կը ներկայացնեն տարբեր նիւթեր:

Նախակրթարանի ատենամարզանքի յանձնախումբի անդամներն են՝ տիկ. Սոնա Մուղալեան, տիկ. Նա'ամաթ Էլ Խաթիպ, տիկ. Նայիրի Նոիրա, տիկ. Յուլիա Զեչիշեան, օրդ. Վարդուկ Ֆռնրզեան եւ տիկ. Չարմինէ Ասմինեան:

Ստորեւ կը ներկայացնենք 2017-2018 կրթական տարեշրջանի նախակրթարանի ատենամարզանքներու ամփոփ տեղեկագիրը, պատրաստուած տիկ. Չարմինէ Ասմինեանի կողմէ:

Սեպտեմբեր 29 ՀԱԳ-ի օրէնքներու բացատրութիւն – Տիկ. Սոնա Մուղալեան ներկայացուց դպրոցի բոլոր օրէնքները, որոնք գործադրութիւնը կը նպաստէ առողջ մթնոլորտի, կարգ-կանոնին եւ տիպար աշակերտի կերտումին: Իրենց կարգին, աշակերտներ ընթերցեցին օրէնքներու գրքոյկէն կարեւոր բաժիններ, ապա ուսուցչուհիներ բացատրեցին այն կետերը, որոնք պետք է գործադրել թէ՛ դպրոցէն ներս եւ դուրս, որպէսզի բարձր պահեն ՀԱԳ-ի անունն ու վարկը:

Հոկտեմբեր 6 Զարգացման մրցում – Օրդ. Վարդուկ Ֆռնրզեանի կազմակերպած զարգացման մրցումին մասնակցեցան նախակրթարանի Ա. – Զ. դասարանի աշակերտները, կազմելով «Արարատ», «Տաթեւ» եւ «Արագած» խումբերը: Մասնակիցները պատասխանեցին իրենց ուղղուած գրական, գիտական, պատմական, աշխարհագրական եւ քաղաքական հարցումներուն: Յաղթեց «Տաթեւ» խումբը:

Հոկտեմբեր 13 Թարգմանչաց տօն – Հայոց լեզուի երկու ուսուցչուհիները՝ օրդ. Վարդուկ Ֆռնրզեան եւ տիկ. Չարմինէ Ասմինեան գեղեցիկ յայտագիր մը պատրաստած էին Թարգմանչաց տօնին նուիրուած: Աշակերտները իրենց մասնակցութիւնը բերին Մեսրոպ Մաշտոցին եւ հայոց լեզուին նուիրուած արտասանութիւններով: Ե. եւ Զ. դասարանի աշակերտները ընթերցումներ կատարեցին գիրերու գիւտին եւ Ոսկեդարի մասին, Իսկ Ա. եւ Բ. դասարանի աշակերտները կարճ թատերգութիւն մը ներկայացուցին Մ. Մաշտոցին նուիրուած:

Հոկտեմբեր 20 Առողջապահութիւն եւ Մաքրութիւն – Առողջապահութեան եւ մաքրութեան կարեւորութիւնը նիւթին շուրջ բացատրութիւններ եւ օգտակար ցուցմունքներ տուաւ ՀԱԳ-ի ծնողներէն տիկ. Սիլվա Սայիլեան: Ան աշակերտներուն սորվեցուց թէ ինչպէս պետք է մաքուր պահեն իրենց մարմինը, ձեռքերը, ակռաները եւ հագուստը, ինչպէս նաեւ հոգ տանին իրենց ապրած վայրին՝ տուն, դասարան, փողոց: Աշակերտները դիտեցին պատկերներ եւ տեսաերիզ եւ լաւ տպաւորութեամբ վերադարձան տուն:



Հոկտեմբեր 27 **ԳՈՀԱՐ համոյթի տեսերիզի ակնդրութիւն** - Աշակերտներէն մեծ թիւ մը կը հետեւի երաժշտութեան. անոնք կը սիրեն նուագել, երգել ու պարել: Հետեւաբար աշակերտները մեծ խանդավառութեամբ դիտեցին ԳՈՀԱՐ համոյթի ազգային-հայրենասիրական երգերը եւ մթնոլորտէն խանդավառուած՝ շուրջպար մը բռնեցին:

Նոյեմբեր 3 **Թուաբանութեան Սրցում** - Տիկ. Յոլեր Քէշիշեանի կողմէ պատրաստուած թուաբանութեան հարցումները՝ հանելուկներու եւ խաղերու ձեւով, ուղղուեցան աշակերտներուն, որոնց ճիշդ պատասխան տուող աշակերտը գնահատուեցաւ եւ ծափահարութեան արժանացաւ:

Նոյեմբեր 10 **Հետաքրքրական խաղեր** - Տիկ. Սոնա Մուղալեան աշակերտներուն համար պատրաստած էր զանազան հետաքրքրական, զուարճալի խաղեր՝ իւրաքանչիւր դասարանի տարիքին յարմար: Աշակերտները մեծ խանդավառութեամբ մասնակցեցան եւ քաջալերեցին բոլոր յաղթողները:

Նոյեմբեր 17 **Լիբանանի Անկախութեան Տօն** - Արաբերէնի դասատու տիկ. Նա'ամաթ խաթափի կողմէ կազմակերպուած յայտագիրը՝ արտասանութիւններ, արաբերէն հայրենասիրական երգեր եւ ընթերցումներ, գործադրուեցաւ աշակերտներուն կողմէ: Ապա ուսուցչուհին խօսեցաւ Լիբանանի դրօշին մասին: Աշակերտները մեծ խանդավառութեամբ մասնակցեցան եւ բարձր տրամադրութեամբ բաժնուեցան սրահէն:

Նոյեմբեր 27 **Լիբանանի Անկախութեան Տօն (2)** - Նախակրթարանը մասնակցեցաւ երկրորդականի աշակերտներուն յայտագրին:



Դեկտեմբեր 1 Մանկավարժական դասախոսություն - Հոգեբան պարոն Մանուկ Իսախանյանի աշակերտներուն խօսեցաւ Bullying-ի մասին: Ան օրինակներով եւ պատմութիւններով իր միտքը կրցաւ յայտնել աշակերտներուն: Խօսքին միտք բանին կ'ամփոփուէր հետեւեալ սկզբունքներով. ընկերը պէտք է սիրել, յարգել եւ անոր օգնել: Սխալ է անընդհատ նեղութիւն տալ ու ծաղրի ենթարկել եւ այլն:



Դեկտեմբեր 8 Տեսերիզի ցուցադրութիւն - Աշակերտները դիտեցին հաճելի եւ դաստիարակչական անգլերէն ֆիլմ մը՝ Նոր տարուան տօնին յարմար:

Դեկտեմբեր 15 Ամանորեան յայտագիր - Նախակրթարանի Ա. - Դ. դասարաններու աշակերտները իրենց անգլերէնի դասատու տիկ. Նայիրի Նոհրայի կազմակերպութեամբ ներկայացուցին հաճելի յայտագիր մը: Անոնք անգլերէն խմբային երգեր կատարեցին՝ “Joy to the world”, “We wish you”, “The Gingerbread Man” եւ այլն:

Դեկտեմբեր 22 Ամանորի ընդհանուր տօնակատարութիւն

Յունուար 12 Ընթերցանութեան մրցում - Հայերէն ընթերցանութեան մրցումին մասնակցեցան նախակրթարանի վերի չորս դասարաններու աշակերտները: Անոնց տրամադրուեցան անպատրաստից նիւթեր հայ գրականութեան հեղինակներէն: Մասնակցողները գնահատուեցան քննիչ յանձնախումբին կողմէ, որ նոյնպէս կը բաղկանար աշակերտներէ:

Յունուար 19 Համակարգիչի օգտագործումը - Պրն. Նժդէհ Մխսեան եւ օրդ. Կարին Ադամեան հաճելի խաղերու եւ բացատրութիւններու միջոցով ցոյց տուին համակարգիչի գործածութեան դրական եւ ժխտական կողմերը:

Փետրուար 16 Վարդանանց տօնակատարութիւն - Դ. եւ Ե. դասարաններու աշակերտները շաբաթ մը ի վեր կը պատրաստուէին Վարդանանց նուիրուած յայտագրին: 2. դասարանէն Նժդէհ Պալեան եւ Ղազար Մեսճեան մեներգեցին քաջն Վարդանին նուիրուած երկու հայրենասիրական երգեր, իսկ Մանէ Զոլագեան, Արմինէ Քէշիշեան եւ Սերլի Ինճեան ընթերցումներ կատարեցին. փոքր դասարանցիները հանդես եկան խմբային ասմունքներով: Օրուան պատգամը փոխանցեց տիկ. Չարմինէ Ասմինեան:

Փետրուար 23 Բարեկենդան - Նախակրթարանի աշակերտները անհամբերութեամբ կը սպասէն իրենց շատ սիրած Բարեկենդանի տօնը: Դպրոցի 4-րդ յարկին վրայ կը նկատուէին բարեկենդանը յուշող քանի մը գծապատկերներ եւ տօնական պատրաստութիւն: Աշակերտները մեծ խանդավառութեամբ ծպտուեցան նախաՎերջին պահուն եւ սկսան շրջիլ յարկին վրայ, ուր տեղի ունեցան շարք մը խաղեր եւ պարեր՝ ստեղծելով ուրախ մթնոլորտ մը:

**Մարտ 2**

Ուսուցչաց Տոն – Աշակերտները բարի մաղթանքներով, մեծարանքի եւ գնահատանքի խօսքերով ու արտասանություններով երախտագիտություն յայտնեցին իրենց ուսուցիչներուն եւ նուիրեալ դաստիարակներուն: Անոնք խոստովներ տուին դառնալու լաւ աշակերտներ եւ իսկական հայեր ու պարտաճանաչ քաղաքացիներ: Օրուան բանախօսն էր ՀԱԳ-ի նախկին վաստակաւոր ուսուցչուհի օրդ. Մաքրուհի Ունճեան: Ան խրատեց աշակերտներուն ըլլալ տիպար եւ վարժարանի անունը բարձր պահող մարդիկ:

**Մարտ 8**

Չատկուան տոնակատարություն – Առաւօտեան պաշտամունք տեղի ունեցաւ Գոլէճի ընդհանուր աշակերտութեան համար, ապա աշակերտները դասարան առ դասարան խումբերու բաժնուեցան եւ իրենց մասնակցութիւնը բերին զանազան խաղերու, մրցումներու եւ հաւկթախաղին: Կը տիրէր ուրախ մթնոլորտ եւ տօնական տրամադրութիւն: Աշակերտները տուն վերադարձան կողով մը լեցուն զատկուան տուրմերով եւ քաղցրեղեններով:

Մարտ 16

Just For Kids – Հիւր խումբի երիտասարդները ներկայացուցին Ս. Գիրքէն աշխարհի ստեղծումի պատմութիւնը: Աշակերտները լրջօրէն հետեւեցան նիւթին:

Մարտ 13

Տաղանդներ – Նախակրթարանի Ա. դասարանէն մինչեւ նախ. 2. դասարանի աշակերտներ մասնակցեցան յայտագրին երգով, նուագով, պարով եւ gymnastic-ով: Ելոյթ ունեցան Անտրեա Տէմիրճեան՝ ջութակ, Նարեկ Չոլագեան՝ դաշնամուր, Լիանա Շահինեան՝ դաշնամուր, Վարդան Աւեսեան՝ դաշնամուր, Նարոտ Գարամանուկեան՝ հայկական պար, Միրա Ղորղորեան՝ gymnastic, Անտրեա Աբրահամեան՝ gymnastic, Ղազար Մեսճեան՝ կիթառ, Ղազար եւ Ռազմիկ Մեսճեան՝ զուգերգ, Արմինէ Զէշիշեան՝ ջութակ, Մանէ Չոլագեան՝ դաշնամուր, Նժդէհ Պալեան՝ դաշնամուր, Սերի-Ռոզի Շահինեան եւ Դալար Տաքեսեան՝ պար, Լորա Սայիլեան եւ Սերի Ինճեան՝ երգ, Արտա Գրիգորեան՝ դաշնամուր, Վահէ Միքայէլեան՝ ջութակ:



Ապրիլ 13

Հետաքրքրական խաղեր - Տիկ. Սոնա Մուղալեան կազմակերպած էր լեզուական խաղեր՝ բառախաղ, նոյն տառով սկսող շարք մը բառերու գուշակում՝ բացատրութիւններէն, ձեւերէն: Աշակերտները աշխուժութեամբ մասնակցեցան բոլոր խաղերուն:

Ապրիլ 20

Հայոց Գեղասպանութեան Նահատակներու Ոգեկոչում - Հայոց վրայ գործադրուած ցեղասպանութեան 103-րդ տարուան առթիւ պատշաճ յայտագիր մը պատրաստուած էր ուսուցչուհի Տիկ. Չարմինէ Ասմինեանի կողմէ, մասնակցութեամբ նախակրթարանի Գ. - 2. դասարաններու աշակերտներուն: Բացման խօսքով ելոյթ ունեցաւ Չ. դասարանի աշակերտուհի Արմինէ Թէշիշեան, ապա խմբային արտասանութիւններով, ընթերցումներով եւ խմբերգով աշակերտները իրենց մասնակցութիւնը բերին յայտագրին: Նախ. Ե. դասարանը թատերական պատկեր մը ներկայացուց Թալէաթին եւ ցեղասպանութեան պարագլուխներուն մասին: Փակման խօսքով ելոյթ ունեցաւ տիկ. Չարմինէ Ասմինեան:

Ապրիլ 27

Թուաբանութիւն խաղեր - Ատենամարզանքը կազմակերպած էր թուաբանութեան ուսուցչուհի տիկ. Յոլեր Թէշիշեան: Բոլորը խանդավառ մասնակցեցան խաղերուն եւ զիրար քաջալերեցին:

Մայիս 11

Երաժշտական Նուագահանդէս - Նախակրթարանէն մեծ խումբ մը աշակերտներ եւս մասնակցեցան այս աւանդական ատենամարզանքին, ցուցադրելով իրենց երաժշտական ունակութիւնները:

Մայիս 28

Հայաստանի հանրապետութեան 100-ամեակ - Կազմակերպուած էր երկրորդական բաժնին կողմէ: Նախակրթարանէն Վարդան Աւեսեան մասնակցեցաւ դաշնամուրի նուագով, իսկ Չ. դասարանը՝ ասմունքով:

Յունիս 1

Դաստիարակչական ֆիլմի ցուցադրութիւն - Տարուան վերջին ատենամարզանքին աշակերտները դիտեցին դաստիարակչական տեսերիզ մը:









2 2017-2018 դպրոցական տարեշրջանին ՀԱԳ-ի Աստուածաշունչի ակումբը ունեցավ 15 անդամներ՝ Է. - ԺԲ. կարգի աշակերտներին: Վարչութեան անդամներն էին.

Փերլա Պասեթ (ԺԲ.)	Ատենապետուհի
Գաթրինա Տումանյան (ԺԲ.)	Փոխատենապետուհի
Վանա Սերայտարեան (ԺԱ.)	Ատենադպրուհի
Սանտրա Պասեթ (ԺԱ.)	Գանձապահուհի
Տիկ. Հռութ Եունիսես	Խորհրդատու

Ա. ՊԱՇՏԱՍՈՒՆԸ

- 2017-2018 դպրոցական տարեշրջանին, Աստուածաշունչի ակումբի անդամները առաջնորդեցին առաւօտեան պաշտամունքները երգեցողութիւնով, նոր երգեր սորվեցնելով կամ կարճ խորհրդածութիւններով: Իրենց միացան նաեւ եկեղեցիիս Պատանեաց խումբին անդամները:
- 22 Դեկտեմբեր 2017-ին Ծնունդի միացեալ պաշտամունք կազմակերպեց եւ առաջնորդեց Աստուածաշունչի ակումբի վարչութիւնը: Նախակրթարանի աշակերտները Ծնունդի նոր երգերով ճոխացուցին երգեցողութիւնը: Օրուան պատգամաբերներն էին վեր. Հրայր եւ տիկ. Կարինէ Զոլազեանները, որոնք շեշտեցին Աստուծոյ սերը իր մարդեղութեան ընդմէջէն:
- 28 Մարտ 2018-ին ունեցանք Յարութեան տօնի պաշտամունքը դարձեալ պատրաստուած վարչութեան կողմէ: Ճոխ երգեցողութենէ ետք, անդրադարձանք, թէ ի՞նչ դիրքորոշում պիտի ունենանք Աստուծոյ շնորհքին դիմաց. ոճրագործին պէս պիտի զոջա՞նք, թէ՞ Պիղատոսի պէս չէզոք կեցուածք պիտի ընդունինք:

Բ. ԱՏԵՆԱՍԱՐԶԱՆԸ

- 28 Մարտ 2018-ին, Յարութեան տօնին առիթով, Աստուածաշունչի ակումբի վարչութիւնը խաղերու շարք մը կազմակերպեց երկրորդականի աշակերտներուն: Ծնորհակալութեամբ կը յիշենք դպրոցի Ծնողական Մարմինը, որ այս խանդավառ պահը ճոխացուց հիւրասիրութիւնով:

Գ. ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

- Դեկտեմբեր 2017-ին դպրոցիս 5-րդ յարկին վրայ տօնածառին տակ դրուեցան տուփեր, որոնք աշակերտները լեցուցին



տարբեր տեսակի ուտեստեղէններով եւ նոր տարուան նախօրեակին տարուեցան Հայ Աւետարանական Ընկերային Ծառայութեան Կեդրոն՝ Թրատ, որպէսզի բաժնուին կարօտեալ ընտանիքներու:

- 16 Դեկտեմբեր 2017-ին ՀԱԳ-ի Աստուածաշունչի ակումբի անդամները ուղղուեցան Թրատ, ուր միացան քոյր դպրոցներու Աստուածաշունչի ակումբի անդամներուն, միասին պատրաստուած յայտագրի մը համար: Կարճ պաշտամունքէ եւ խորհրդածութենէ ետք անդամները ուրախ մթնոլորտի մէջ խաղցան, ձեռային աշխատանք պատրաստեցին եւ հիւրասիրեցին մանուկները, որմէ ետք իրենց պատրաստած տուփերը նուիրեցին անոնց:
- 27 Մարտ 2018-ին Յարութեան տօնի նախօրեակին ակումբի անդամները դպրոցիս աշակերտներուն հետ 20 տուփեր պատրաստեցին, որոնք համեղ ուտեստեղէններով եւ բարեմաղթութիւններով դրկուեցան Ընկերային Ծառայութեան Կեդրոն, բաժնուելու կարօտեալ ընտանիքներու:
- Աստուածաշունչի ակումբի անդամները, որպէսզի նիւթական ծանր բեռը թեթեւցընեն թէ՛ դպրոցէն եւ թէ՛ իրենց ընտանիքներէն, երկու տարբեր առիթներով կազմակերպեցին կարկանդակի վաճառք, որուն հասոյթը գործածուեցաւ համագումարին եւ այլ գործունեութիւններու: Ծնորհակալ ենք անոնցմէ, որոնք պատրաստեցին եւ գնեցին իբր քաջալերանք:

Այս գործունեութիւնները ակումբիս կատարած տարեկան աշխատանքներէն կարելորագոյնը կը նկատուին, որովհետեւ աշակերտներուն մէջ սիրայօժար տալու գաղափարը կը զարգացնեն: Անոնցմէ ոմանց անդրադարձը կրնաք կարդալ «Չուարթնոց»ի այս տարուան թիւին մէջ:

Դ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Աստուածաշունչի ակումբը գործակցաբար Հայ Աւետարանական Ա. Եկեղեցիի Պատանեաց խումբին, ունեցաւ իր տարեկան համագումարը 16-17 Փետրուար 2018-ին, ԶԶԱԿ-ի մէջ:

Համագումարի պատգամաբերն էր դոկտ. Ուիլյամը որ փոխանցեց օրուայ նիւթը՝ «Ինչպէս կրնամ վստահիլ Աստուծոյ»: Ան ֆիլմ մը ցուցադրեց, որպէսզի բացատրէ, թէ որո՞նց կը վստահինք: Աստուածաշունչի ակումբի անդամները ճոխացուցին յայտագիրը պաշտամունքով, ձեռային աշխատանքով եւ խաղերով: Համագումարի առաջնորդներն էին՝ տիկին Հռութ Եունիսէս, օրիորդ Կարին Ադամեան, տեսաք Նժդէհ Միսսեան եւ Լեւոն Պապիկեան:

Ե. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆՆԵՐ

- 18 Նոյեմբեր 2017-ին Աստուածաշունչի ակումբի անդամները ունեցան իրենց առաջին գործունեութիւնը ՀԱԳ-ի մէջ: Պաշտամունքի պահէն ետք, ուր սորվեցան «Giants Will Fall» երգը, դիտեցին «Bruce Almighty» ֆիլմը, որմէ ետք խումբերու բաժնուեցան եւ խորհրդակցեցան Աստուծոյ ամենակարող ըլլալուն եւ մարդուն ազատ կամք ունենալու նիւթերուն շուրջ:
- 21 Յունուար 2018-ին Աստուածաշունչի ակումբի անդամները եկեղեցիի պաշտամունքէն ետք ուղղուեցան դէպի Սայտա, ուր ճաշեցին եւ ետքը այցելեցին «Մանթրա» եկեղեցին, ուր անձնական խորհրդածութեան պահ ունեցան, ապա խանդավառ եւ ուրախ տուն վերադարձան:



- 5 Ապրիլ 2018-ին Աստուածաշունչի ակումբի անդամները ուրիշ պտոյտ մը ունեցան դէպի Շեքքայի եկեղեցին, ուր իրենց աղօթքները ըրին, ետքը Պաթրուն վերադառնալով այցելեցին մի քանի եկեղեցիներ եւ ուրախ սրտով միասին ճաշեցին:
- 19 Յունիս 2018-ին Աստուածաշունչի ակումբի անդամները իրենց տարեկան պտոյտը ունեցան ԶԶԱԿ-ի մէջ, ուր ճաշեցին եւ խաղցան կարճ պաշտամունքէ մը ետք, փառք տալով Աստուծոյ անցնող տարեշրջանին իրենց վայելած բարիքներուն համար:

2. ԶԵԿՈՒՑԱՏԱԽՏԱԿ

Տարուան ընթացքին Աստուածաշունչի ակումբի զեկուցատախտակները (որոնք ամէն յարկի վրայ կը գտնուին) ամսական դրութեամբ յարդարուեցան Աստուածաշունչի համարներով, հոգեւոր գրութիւններով, իմաստալից խօսքերով եւ աշակերտներու ձեռայիններով՝ աշակերտները քաջալերելու, առաջնորդելու եւ գիտակից դարձնելու նպատակով:

Ե. «ՉՈՒԱՐԹՆՈՑ»

Ակումբը հրատարակեց իր պարբերաթերթին 10-րդ հատորը (սոր շրջան):

Հայկական Ակումբը իր առաջին նիստը ունեցավ Երեքշաբթի, 10 Հոկտեմբեր 2017-ին: Առաջին հերթին կատարուեցավ դիւանի ընտրութիւն:

Ատենապետ Նայելի Մարգեան (Ժ.)
Փոխատենապետ Անթոնի Օպէյտ (Ժ.)
Գանձապահ Այգ Արզումանեան (Թ.)
Զարտուղար Գառնի Զեօշկերեան (Թ.)
Խորհրդատու Տիկ. Անի Էքմէքճեան- Պիլալեան



2017-2018 տարեշրջանին, Հայկական Ակումբը ունեցավ հետեւեալ գործունէութիւնները:

ՑՈՒՅԱՏԱՆՏԱԿԻ ՅԱՐԴԱՐՈՒՄ

Ակումբի խորհրդատուն 2017-2018 կրթական տարեշրջանի ընթացքին, ցուցատախտակը յարդարեց ազգային հետեւեալ տօներու՝ Վարդանանցի, Յեղասպանութեան եւ Հայաստանի Ա. Հանրապետութեան Անկախութեան 100 ամեակի նուիրուած նկարներով եւ գրութիւններով:

ԱՏԵՆԱՄԱՐԶԱՆՔ

- Ա) Ուրբաթ, 20 Ապրիլի ատենամարզանքը նուիրուած էր ցեղասպանութեան 103-ամեակի ոգեկոչման: Կազմակերպուեցաւ կլոր սեղան, որուն ընթացքին Հայկական ակումբի խորհրդատուն կարգ մը հարցադրումներ կատարելով՝ աշակերտներուն առիթը տուաւ կարծիքներ փոխանակելու:
- Բ) Ուրբաթ, 18 Մայիսին միացեալ ատենամարզանքը նուիրուած էր Հայաստանի Ա. Հանրապետութեան 100-ամեակին: Բացման խօսքը կատարեց տիկին Անի Էքմէքճեան-Պիլալեան: Գեղարուեստական յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին նախակրթարանի եւ միջնակարգի աշակերտները՝ խմբային ասմունքով, նուագով: Այստեղ ուշագրաւ էր Այգ Արզումանեանի պատրաստած պաստառը նուիրուած Սարգարապատի յուշարձանին:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

- Ա) Ուրբաթ, 13 Հոկտեմբեր 2017-ին Հայկական ակումբի անդամները, ընկերակցութեամբ վարժարանի տնօրէն դոկտ. Արմէն Իւրնէշեանի եւ ակումբի խորհրդատու՝ տիկին Անի Պիլալեանի, ներկայ գտնուեցան համերգի մը, որ տեղի ունեցաւ Աշրաֆիէի Ս. Յովսէփ եկեղեցւոյ մէջ:



Լիբանանի երաժշտանոցի ֆիլհարմոնիք նուագախումբը, Կարօ Աւեսեանի ղեկավարութեամբ, մատուցեց դասական երաժշտութեան գոհարներ:

- Բ) Երեքշաբթի, 21 Նոյեմբեր 2017-ին ակումբի անդամները ներկայ եղան դասախօս-



սուրճան մը, որ տեղի ունեցաւ ՀԲԸՄ-ի «ՏԵՄԻՐՃԵԱՆ» կեդրոնի Ասպետներու սրահին մէջ: Դասախօսութեան նիւթն էր՝ **ԽԱՉՔԱՐԵՐ**: Օրուան դասախօսն էր պրն. Տիգրան Գալուստեան:

- Գ) Ուրբաթ, 21 Դեկտեմբեր 2017-ին ակումբի անդամները կադանդը դիմաւորեցին «Պատկեր» ճաշարանին մէջ, առաջնորդութեամբ տիկին Անի Էքմէքճեան-Պիլալեանի: Հայկական համեղ ճաշեր ճաշակելէ ետք, անոնք տեսերիզի վրայ ծանօթացան հայկական գորգի նախշերու իմաստներուն, ապա ծեռային աշխատանք կատարելով իւրացուցին իրենց ստացած գիտելիքները: Ներկայ էր նաեւ երգիչ Վիգէն Տիչէքենեան, որ ճոխացուց մթնոլորտը հայերէն երգերով:
- Դ) Զորեքշաբթի, 28 Մարտ 2018-ին կրկին «Պատկեր» ճաշարանին մէջ ակումբի անդամները ճաշելէ ետք, բարձրացան «Պատկեր»ի ցուցասրահ, ուր առիթը ունեցան ծանօթանալու բեմադրիչ-դերասան Հրայր Գալեմքերեանին: Տեսերիզի ցուցադրութեամբ Հրայր միջազգային եւ հայկական ֆիլմերու մէջ տեղ գտած տեսարաններուն վերլուծումին եղանակները ծանօթացուց:
- Ե) Ուրբաթ, 27 Ապրիլ 2018-ին Ակումբի անդամները ներկայ եղան լուսանկարչական ցուցահանդէսի մը «Պուրճ Համուտի Արհեստներ» վերնագրով, որ տեղի ունեցաւ «Պատկեր»ի ցուցասրահէն ներս: Ցուցահանդէսի նպատակն էր, կորսուած արհեստներուն նոր շունչ տալ, յատկապէս շեշտը դնելով անոնց ստեղծագործական կարելորութեան վրայ:

ԱՐՏԱՇԵՍ ՏԵՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ՇԱՐԱԴՐԱԿԱՆ ՄՐՑԱՆՔ

ՀԱԳ-ի հայ գրականութեան հանգուցեալ ուսուցիչ Արտաշէս Տէր Խաչատուրեանին անուան մրցանակը, որ հաստատուած է անոր աշակերտներէն Տէր Եւ Տիկին Յովիկ Եւ Սիլվա Ներսէսեաններուն կողմէ, այս տարի ստացան հետեւեալ աշակերտները.

ԵՐԷՅ

Առաջին	Կարին ՏԵՄԻՐՃԵԱՆ
Երկրորդ	Սանտրա ՊԱՍԵՔ
Յիշատակութիւն	Գարլա ՊԱՍՏԱՃԵԱՆ

ԿՐՏԱՆԵՐ

Առաջին	Այգ Արզումանեան Եւ Նարե Գարմանուկեան
Յիշատակութիւն	Նարինէ ՊԱՍՏԱՃԵԱՆ Եւ Գառնի Քեօշկերեան

«ԳԱՌՆԻ» ԱՇԽԱԿԵՐՏԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ

Հայկական Ակումբի աշակերտական պարբերաբերթին՝ «Գառնի»-ի 45-րդ տարուան թիւին բովանդակութիւնը կը պարփակէ աշակերտական շարադրութիւններէ լաւագոյն նմոշներ, «Դարձիր գիրքի հեղինակ» մանկական գիրքի պատրաստութեան գրութիւնները, «Սարդարապատից Արցախ» խորագիրով համահայկական շարադրութեան մրցոյթի մասնակցող աշակերտներու շարադրութիւններ եւ այլ նիւթեր:



Հայ Աւետ. Գոլէճի Պատմութեան ակումբի խորհրդատու, ՀԱԳ-ի Պատուակալ տնօրէն դոկտ. Զաւէն Մարդէան 2017-2018 տարեշրջանի տարեսկիզբին ակումբի 24 անդամները 10 Հոկտեմբեր 2018-ին ընտրական ժողովի հրաւիրեց: Գաղտնի քուէարկութեամբ վարչական ընտրուեցան:

Ատենապետ Գաթրինա Տումանեան (ԺԲ.)
Փոխատենապետ Կերի Լէփեճեան (ԺԲ.)
Ատենադպիր Արիժ Սիտանի (Թ.)
Գանձապահ Աւօ Գոնիալեան (ԺԱ.)



Նկատի առնելով որ անդամակցութեան եւ վարչութեան մեծ մասը կու գար Պաքալորեայի եւ Պրեօվէի դասարաններէ, միացեալ փորձ քննութեանց եւ անոր նախորդող դադարին պատճառով, ակումբին գործունէութիւնները սահմանափակուեցան Ա. կիսամեակին:

2018-2019-ի ընթացքին հետեւեալ գործունէութիւնները իրականացան:

ԹԱՆԳԱՐԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

→ 29 Նոյեմբեր 2017-ին, ակումբի անդամները, առաջնորդութեամբ իրենց խորհրդատուին, այցելեցին Պէյրութի Ամերիկեան Համալսարանի թանգարանը եւ լսեցին անոր բացատրութիւնը հոն ցուցադրուող առարկաներուն մասին:

ՊՏՈՅՏ

- 21 Հոկտեմբեր 2017-ին ակումբի անդամները իրենց խորհրդատուին առաջնորդութեամբ եւ տուած բացատրութիւններով այցելեցին Էմիր Պէշիր Շեհապի Պէյրութի պալատը:
- 29 Դեկտեմբեր 2017-ին անոնք այցելեցին Ճպէյլի հնադարեան բերդը եւ շրջեցան անոր շրջակայքը: Տեսան օպելիսքներու գերեզմանոցը, հելլենիստական փոքր ամփիթատրոնը եւ փիլնիկեան թագաւորներու գերեզմանները:

ՉԵԿՈՒՑԱՏԱԽՏԱԿԻ ՅԱՐԴԱՐՈՒՄ

Երկու առիթներով՝ մին պատմութեան հետ առնչուող, իսկ միւսը՝ Հայաստանի Ա. Հանրապետութեան հարիւրամեակին նուիրուած նիւթերով, ակումբի խորհրդատուն յարեց ակումբին զեկուցատախտակը:



23 Հոկտեմբեր 2018-ին Կենսոլորտի ակումբը ունեցավ իր առաջին հանդիպումը, որուն ընթացքին անդամները ընտրեցին վարչութեան հետեւեալ կազմը.

Ատենապետ Անթոնի Օպէյտ (Ժ.)

Փոխատենապետ Արիժ Սիտանի (Թ.)

Խորհրդատու Տիկ Նուարդ Ղորղորեան




14 անդամներով ակումբը սկսաւ իր գործունեութիւններուն:



- 3 Նոյեմբեր 2017-ին ակումբի անդամները կազմակերպեցին ատենամարզանք մը, որ բաժնուած էր 3 մասերու – գիտական տորութիւններ, բառ գուշակել եւ ընդհանուր զարգացման մրցում՝ կենսոլորտի նիւթին շուրջ:
- Ակումբը դարձեալ առիթը ունեցաւ դպրոցին զեկուցատախտակը զարդարելու կենսոլորտի հետ կապուած տարբեր գիտելիքներով:

- 28 Մայիս 2018-ին ակումբը ունեցաւ իր պտոյտը դէպի Չղարթայի Պնաշ'ի լիճը: Անդամները առիթը ունեցան այցելելու զմոտուած կենդանիներու թանգարանը ուր տեսան բաւական մեծ թիւով տարբեր կենդանիներ: Ապա, նաևով պտոյտ մը ունեցան լճակին վրայ:

2017 - 2018-ի Աշակերտական Հրատարակութիւնները



1994-Էն ի վեր գործող Լիբանանի Կրթական Նախարարության սահմանած օրենքին համաձայն, 11 Դեկտեմբեր 2017-ին, տնօրենության հրավերով, միաձայնությամբ ընտրությունեցաւ Ծնողաց Նոր մարմինը, որ պիտի գործէ մինչեւ 2020:

12 Յունուար 2018-ին մարմինը գումարեց իր առաջին ժողովը, տնօրեն դոկտ. Արմեն Իւրնէշլեանի ներկայությամբ, որ շեշտեց աւանդութիւնը պահելու կողքին նորարարութեան անհրաժեշտութիւնը, միշտ պահելով ՀԱԳ-ի ուսումնական բարձր մակարդակը: Ապա, ընտրութեցաւ դիւանը հետեւեալ կազմով.

Տիկին Կարինէ Զոլագեան

Տիկին Ալին Պօղոսեան

Տիկին Անահիտ Պասէթ

Պարոն Մարտիկ Շեքերճեան

Տիկիններ Հուրի Շահինեան եւ Գոհար Գրիգորեան

Տիկնայք Վանեսա Ֆրանսիս, Թամար Մեսճեան, Սիլվա Սայիլեան,

Սիլվա Մինասեան, Զատ Սայէդ, Կրեթա Չէթունցեան

եւ Սիլվա Լեփեճեան

(ատենապետուհի)

(փոխատենապետուհի)

(ատենադպրուհի)

(գանձապահ)

(հաշուեքննիչ)

(խորհրդականներ)

Ծնողաց մարմնի պարտականութենէն եւ ընթացիկ գործունեութենէն զատ, նորընտիր վարչութիւնը կազմակերպեց երկու ձեռնարկներ.

Ա. Հինգշաբթի, 8 Մարտ 2018, կ.ե. ժամը 2.00-ին, Հայ Աւետ. Ա. Եկեղեցւոյ հանդիսարանին մէջ, ճաշկերոյթ ի պատիւ կրթական մշակներուն: Խօսք առին տիկնայք Կարինէ Զոլագեան եւ Թամար Մեսճեան: Յանուն ուսուցչակազմին շնորհակալութեան եւ շնորհաւորութեան խօսք արտասանեց տնօրէնը:



Բ. Զորեքշաբթի, 23 Մայիս 2018-ին, Հայ Աւետ. Ա. Եկեղեցւոյ հանդիսարանին մէջ, Նախաճաշով մը նշուեցաւ «Մայրերու Օր»-ը, ներկայությամբ ծնողներու եւ հիւրերու: Ատենապետուհի տիկին Կարինէ Զոլագեանի բացման խօսքին յաջորդեց խիստ շահեկան մանկավարժական դասախօսութիւն մը, «Տունի մթնոլորտը քննութիւններու Նախօրեակին» նիւթով, որ ներկայացուց մանկավարժութեան դասախօս տիկին Շադիկ Գանտահարեան-Խիւտավերտեան: Տնօրէնին շնորհակալութեան եւ բարի գալուստի խօսքէն ետք, դպրոցի տարբեր դասարաններու աշակերտներ ներկայացուցին գեղարունեստական կոկիկ յայտագիր մը:



Տիկնանց օժանդակ մարմնի նոր անդամները, ստանձնելով քաֆերիային մատակարարումը, ընթացիկ աշխատանքներն բացի, ունեցան զանազան գործունեություններ: Նոր տարուան առթիւ կազմակերպուած վիճակահանութեան եկամուտով աշակերտներուն նուէրներ գնուեցան եւ համեղ ուտելիքներ հրամցուեցան: Դպրոցին վերջին օրը նաեւ, տիկիկներ քաղցրեղէններ պատրաստած էին աշակերտներուն համար: Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս Տիկնանց օժանդակը յանձն առաւ ամաւերջի հանդէսի հիւրասիրութիւնը: Քաֆերիայի եւ այլ գործունեութիւններու եկամուտով, Մանկապարտեզի խաղաղարին եւ առաջինէն ութերորդ դասարաններուն հովահարներ անցուեցան:



2017-2018 կրթական տարեշրջանին, սոյն մարմնին մաս կազմեցին տիկիկներ Վերա Հատտատ, Սալբի Գալուստեան, Ալին Պօղոսեան, Թալին Գազանճեան, Հուրի Շահինեան, Ազատիկ Այնթապեան, Յասմիկ Աւետեան, Սիլվա Լեփեճեան, Գոհար Գրիգորեան:

Օգնական ձեռքեր՝

տիկնայք Վիքի Պապիկեան, Յասմիկ Տէմիրճեան, Հռութ Եւնիսէս:



Տիկնանց ընկերային յանձնախումբի անդամներն են՝ տիկնայք Ռուպինա Արթինեան (ատենապետուհի), Արուս Լեպլեպճեան, Լիլա Արթինեան, Մարալ Մխսեան, Ալիսա Քելիշեան, Փաթիլ Խտըրլարեան, Սիլվա Տագետեան եւ Սեդա Գարապաճաքեան:

Տարուան ընթացքին յանձնախումբը կազմակերպեց հետեւեալ պտոյտները, որոնք մեծ խանդավառութեամբ դիմաւորուեցան մասնակիցներուն կողմէ: Եւթեմ, որ յանձնախումբին գործունեութիւններուն եկամուտը կը գործածուի դպրոցին եւ յատկապէս աշակերտներու կենցաղային բարօրութեան համար:



30 Սեպտեմբեր 2017 - Դեպի Քապայաթ՝ Տեյր Մար Շալիթա, Տեյր Մար Տումիթ, Թռչուններու թանգարան, Սայիտտէթ Քալաա:

11 Նոյեմբեր 2017 - Դեպի Պաթրուն՝ Մար Էսթֆան, Սայիտտէթ Նուրիէ, Պաթրունի բերդ, Մար Նոիրա, «Colonel beer microbrewery»:

19 Մայիս 2018 - Դեպի Ֆարայա՝ Մար Իլիաս եկեղեցի, Ֆաքրայի բերդ, Տեյր Էլ Քիամէ, Մար Շարպէլի արձան:

14 Յուլիս 2018 - Դեպի Տըննիէ՝ Քասր Էլ Ահլամ, Չահլան քարայր եւ Չղարթա:



Սոյն պտոյտներուն իրենց մասնակցութիւնը բերին դպրոցի բարեկամներ, նաեւ իր ներկայութեամբ մեզ պատուեց Լիբանանի զբօսաշրջութեան նախարարին կինը՝ տիկ. Անի Կիտանեան, որ միշտ նեցուկ կը կանգնի ՀԱԳ-ի Տիկնանց ընկերային յանձնախումբի բոլոր նախաձեռնութիւններուն:

Պտոյտներու ընթացքին կատարուեցան հետեւեալ նուիրատուութիւնները.

Մի ոմն	1.250.000 Լ.ո.	Յասմիկ Մկըրեան	100.000 Լ.ո.
Հայկան Տիւրքեան	30.000 Լ.ո.	Ալիս Գլպաշեան	100.000 Լ.ո.
Մի ոմն	30.000 Լ.ո.	Մի ոմն	100\$

1967-ի ՇՐՋԱՆԱԻԱՐՏՆԵՐՈՒ ՍՐԱՀԻ ԲԱՅՈՒՄ...



1967-ի շրջանաւարտ դասարանը, 2017-ին Լիբանանի մէջ ունեցաւ իր դասարանային վերահաւաքը: Այդ առթիւ, անոնք փափաք յայտնեցին որ դեգրել ծրագիր մը ՀԱԳ-ի մէջ, որ առաւելաբար միտէր աշակերտութեան մատուցուող ծառայութեանց բարելաւումին: Դոկտ. Իւրնէշլեանի ներկայացուցած առաջարկներէն անոնք ընտրեցին 6-րդ յարկին վրայ գտնուող լատեստողական սրահի ամբողջական նորոգութիւնը եւ արհեստագիտական միջոցներով օժտումը, որպէսզի անիկա ծառայէր հեռավար դասընթացներու, ատենամարզանքներու եւ այլն: Պահանջուած գումարին ապահովումէն եւ հարկ եղած կարգադրութիւնները տնօրինելէ ետք, 14 Մայիսին սկսաւ վերանորոգումը, սիրայօժար հսկողութեամբ դպրոցի շրջանաւարտ Եղիկ Թորոսեանի (1995):

Աշխատանքներուն բարեյաջող աւարտէն ետք, 17 Յունիսին տեղի ունեցաւ սրահին բացումը, որ կոչուեցաւ **1967-ի ՇՐՋԱՆԱԻԱՐՏՆԵՐՈՒ ՍՐԱՀ** կամ **CLASS OF 67 MULTIPURPOSE AV HALL**:

Այս առթիւ զետեղուեցաւ նաեւ 1967-ի դասարանի շրջանաւարտներուն խմբային լուսանկարը եւ անուանացանկը կրող յուշատախտակ մը:


Յատուր պատշաճի ելոյթ ունեցան տնօրէն դոկտ. Արմէն Իւրնէշլեան եւ պրն. Ներսէս Պաղտոյեան: Իսկ նաակատիքի աղօթք մատուցեց վեր. Հրայր Չոլագեան:

Այս առթիւ պր. Պաղտոյեան յուշանուէրով մը պատուեց պր. Եղիկ Թորոսեանը, որ սիրայօժար ծրագրեց եւ գործադրեց վերանորոգումի աշխատանքը, միաժամանակ սրահին նուիրելով ցուցադրութեան յատուկ սարք մը՝ Camera for interactive projection:

Նուիրատուներուն ամբողջական ցանկը տեսնել տեսչական տեղեկագիրին մէջ:

... ԿԱՅՔԻ ՄԵԿՆԱՐԿ...

Նոյն միջոցին, 1967-ի շրջանաւարտներու սրահին մէջ պաշտօնապէս մեկնարկեց ՀԱԳ-ի պաշտօնական կայքը՝ aecbeirut.edu.lb, պատրաստութեամբ 2012-ի շրջանաւարտ Զաւէն Լեփեճեանի:



ՏԻԿՆԱՆՑ ՕԺԱՆԴԱԿ ՄԱՐՄԻՆԻ ՀԻՄՆԱԴԻՐ ԿԱԶՄԻ ԵՐԱԽՏԻՔ



17 Յունիսը նաեւ օր էր երախտիքի, ուղղուած ՀԱԳ Տիկնանց օժանդակ յանձնախումբի հիմնադիր կազմի տիկիններուն, որոնցմէ շատեր աւելի քան քսանամեակ մը սիրայօժար ծառայած են դպրոցին, առաւելաբար քաֆերերիային միջոցով աշակերտներուն մատուցուած որակաւոր ծառայութեամբ եւ հասութաբեր այլ ձեռնարկներով: Իրենց աշխատանքին հասոյթով տիկինները

դպրոցէն ներս ծաւալած են վերանորոգութիւններու եւ անհրաժեշտ կարասիներու գնման աշխատանքներ: ՀԱԳ Հոգաբարձութիւնը, առ ի երախտիք Տիկնանց այդ կազմին, դպրոցի մուտքին զետեղեց յուշատախտակ մը, որուն բացումը կատարեցին տիկնայք Միմի Էքմէքճի եւ Արուս Լեպլեպճեան եւ հոգաբարձութեան ատենապետ պրն. Ներսէս Պաղտոյեան:



Հայ Աւետարանական Գողթնի բոլոր մարմիններուն անունով երախտիրքի յայտուկ խօսք ունինք ներքոյիշեալ չորս ուսուցիչ-ուսուցչուհիներուն, որոնք դպրոցէն ներս երկարամեայ ծառայութենէ ետք, հանգստեան կոչուեցան 2017-ին եւ 2018-ին:

Մեծ է անոնց վաստակը ՀԱԳ-էն ներս սերունդներու կրթութեան գործին մէջ:

Թող Աստուած օրինէ զիրենք եւ իրենց պարգեւէ առողջութիւն եւ արեւշատութիւն:

ՕՐԴ. ՄԱՔՐՈՒՀԻ ՌԻՆԾԵԱՆ



Ծնած է Պէյրութ: Ծրջանաւարտ է Ն. Փալանճեան Ճեմարանէն, Ֆրանսական Գրականութեան Բարձրագոյն Հիմնարկէն (CSL) եւ Սէն Ժոզէֆ Համալսարանի Հայագիտական Հիմնարկէն:

1961-էն ի վեր նուիրուած է հայերէնի ուսուցման ծառայութեան, յատկապէս մանկապարտէզի եւ տարրական դասարաններու մէջ: Հայեցի շունչով տոգորուած սերունդներ կրթած է 56 տարի շարունակ՝ մեծ նուիրումով:

1987 – 2017 հայերէն դասաւանդած է ՀԱԳ-ի մանկապարտէզի եւ նախակրթարանի վարի կարգերու աշակերտներուն:

2005-ին արժանացած է ՄԱՀԱԵ Միութեան «Գնահատանքի վկայագիր»-ին, իր երկարամեայ ծառայութեան համար, ի մասնաւորի ՀԱԳ-էն ներս:

2012-ին պարգեւատրուած է ՀՀ Սփիւռքի նախարարութեան «Պատուոգիր»-ով:

Հանգստեան կոչուելուն առթիւ, 2017-ին դպրոցիս հոգաբարձութիւնը զինք պարգեւատեց «Երկարամեայ ծառայութեան» շքանշանով:

ՏԻԿ. ԱՆԻ ԱՂՊԱՇԵԱՆ



Ծնած է Պէյրութ: Ծրջանաւարտ է Դարուի Յակոբեան վարժարանէն: Պէյրութի Համալսարանական Գողթնէն ստացած է Գործնական գիտութիւններու սոփոմոր (AAS) վկայականը, ապա հետեւած է ՀԲԸՄ-ի Երուանդ Հիւսիսեան Հայագիտական Հիմնարկի դասընթացքներուն, ուրկէ վկայուած է հայագիտութեան մէջ:

1987 – 2017 Հայերէն եւ Հայոց պատմութիւն դասաւանդած է ՀԱԳ-ի նախակրթարանի բարձր կարգերու աշակերտներուն: Թէ՛ դասաւանդութեամբ, թէ՛ գործունէութիւններով կրցած է ազգային ոգի ներարկել աշակերտներուն մէջ:

2012-ին պարգեւատրուած է ՀՀ Սփիւռքի նախարարութեան եւ Համահայկական Համաշխարհային Քոնկրէսի մրցանակով եւ «Առաջին կարգ»-ի վկայականով:

2015-ին արժանացած է ՄԱՀԱԵ Միութեան «Գնահատանքի վկայագիր»-ին, իր երկարամեայ ծառայութեան համար, ի մասնաւորի ՀԱԳ-էն ներս:

Հանգստեան կոչուելուն առթիւ, 2018-ին դպրոցիս հոգաբարձութիւնը զինք պարգեւատեց «Երկարամեայ ծառայութեան» շքանշանով:

ՊՐՆ. ՎԱՀԳԷՆ ԲԻԻԶԱՆԴԵԱՆ



Ծնած է Հալեպ: Շրջանաւարտ է Ալեքիփօ Գոլէճէն եւ Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն, ուրկէ ստացած է մագիստրոսի (MA) աստիճան թուաբանութեան մէջ: 1967-էն ի վեր աշխատած է տարբեր դպրոցներու մէջ, ինչպէս նաեւ դասաւանդած է Պէյրութի Ամերիկեան Համալսարանին եւ Հայկազեան Համալսարանին մէջ:

1980 – 2018 թուաբանութիւն դասաւանդած է ՀԱԳ-ի երկրորդական դասարաններուն:

1995-ին արժանացած է ՄԱՀԱԵ Միութեան «Գնահատանքի վկայագիր»-ին, իր երկարամեայ ծառայութեան համար, ի մասնաւորի ՀԱԳ-էն ներս:

Հանգստեան կոչուելուն առթիւ, 2018-ին դպրոցիս հոգաբարձութիւնը զինք պարգեւատեց «Երկարամեայ ծառայութեան» շքանշանով:

ՊՐՆ. ՄՈՒՍՏԱՖԱ ԹԱՍՍԻ



Ծնած է Լիբանան: 1977-ին ասարտած է Լիբանանի Պետական Համալսարանը, երկրորդական բաժինի Բնագիտութեան ուսուցիչի մասնագիտութեամբ: Աշխատած է տարբեր դպրոցներու մէջ:

1988 – 2018 ՀԱԳ-ի մէջ դասաւանդած է Բնագիտութիւն՝ երկրորդական բաժինին մէջ:

2005-ին արժանացած է ՄԱՀԱԵ Միութեան «Գնահատանքի վկայագիր»-ին, իր երկարամեայ ծառայութեան համար, ի մասնաւորի ՀԱԳ-էն ներս:

Հանգստեան կոչուելուն առթիւ, 2018-ին դպրոցիս հոգաբարձութիւնը զինք պարգեւատեց «Երկարամեայ ծառայութեան» շքանշանով:

ՏԵՍՉԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԳՈԼԷՃԻ 2017-2018 ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

ՀԱԳ-ի հոգաբարձության հրաւերով, երկու տարի վարել էրք փոխտնօրենի պաշտօնը, 2018 Հոկտեմբերին ստանձնեցի Գոլեճի տնօրենությունը, յաջորդելով դոկտ. Զաւէն Մսրրլեանին, որ 50 տարի անընդմէջ տնօրենական ծառայությունում, իր լաւագոյնը տուած է ՀԱԳ-ին, պահպանելով հիմնադիրներուն ազգային ու քրիստոնէական տեսիլքը, աւելարանական կրթական առաքելութեան հիմունքները, միաժամանակ ամրագրելով դպրոցին կրթական բարձր որակն ու ներքին կարգապահական կայուն մթնոլորտը:

ԴՈԿՏ. ԱՐՄԷՆ ԻՐԻՆԵՇԼԵԱՆ

Ա. ՎԵՐԱՄՈՒՏ

Աստուծոյ օրհնությամբ, 2017-2018 տարեշրջանը սկսաւ 26 Սեպտեմբեր 2017-ին եւ աւարտեցաւ 19 Յունիս 2018-ին, առանց որեւէ արտակարգ ընդմիջումի կամ ցնցումի: Պրէզիդէն եւ պաքալորեայի դասարաններու դասաւանդութիւնները սկսան եւ աւարտեցան նշեալ թուականներէն առաջ:

Բ. ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ ԹԻՒ

2017-2018 տարեշրջանի աւարտին, աշակերտութեան թիւը կը ներկայացնէր հետեւեալ պատկերը.

Բաժին	Աշակերտութիւն	Դասարաններ
Մանկապարտէզ	23	3
Նախակրթարան	54	6
Միջնակարգ	22	3
Երկրորդական	16	3
ԸՆԴՀ. ԳՈՒՄԱՐ	115	15

Տարեշրջանի ընթացքին ունեցանք երկու արտագաղթող աշակերտներ դէպի Հայաստան եւ Գաւառ:

Աշակերտութեան աշխարհագրական բաժանումը ունէր հետեւեալ պատկերը.

Շրջան	Թիւ
Պէյրութ վարչական կեդրոն	21
Մար Մխայէլ, Պատաուի	3
Այն էլ Ռմմանէ	2
Պուրճ Համուտ	30
Սին էլ Ֆիլ, Արագած, Տքումնէ, Ռաուտա	13
Տորա, Հանքաշ, Ամանոս, Պաուշիէ, Ֆանար	21
Պրումմանա	2
Ժտէյտէ, Զալքա, Անթիլիաս, Պապիմ	18
Տպայլէ, Նաքքաշ	4
Սարպա	1

Աշակերտներուն մէջ ունեցանք երկու պրագիլցի աշակերտուհիներ, որոնք հետեւեցան միայն անգլերէնով աւանդուող դասերուն: Ունեցանք նաեւ ինը արաբ

աշակերտներ, որոնք կանոնաւորաբար հետեւեցան դպրոցի ամբողջական ծրագիրին, արձանագրելով լաւ յաջողութիւններ հայերէնով աւանդուող դասերուն մէջ: Ուսուցչաց խորհուրդի որոշումով, անոնցմէ մին՝ Ռըտա Աթուէ, աւարտական հանդէսին ներկայացուց հայերէն ուղերձը՝ յանուն շրջանաւարտ դասարանին:

Գ. ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄ ԵՒ ՊԱՇՏՕՆԵՈՒԹԻՒՆ

Դպրոցի անձնակազմը ունէր հետեւեալ պատկերը.

Բնոյթ	Թիւ
Վարչական պաշտօնէութիւն	4
Դռնապան, տնտես, մաքրող	6
Վարորդ	7
Ուսումնական ասպարէզի պաշտօնեաներ	2
Մնայուն ուսուցիչներ	16
Այցելու ուսուցիչներ	15
ԸՆԴՀԱՆՈՒՐ	50

Ազգութիւն

Հայ ուսուցիչներ/պաշտօնեաներ	27
Արաբ ուսուցիչներ/պաշտօնեաներ	10

Ակադ. աստիճաններ

PhD	2
MA, MS, Maitrise	7
BA, BS, License	18
Մանկավարժական որակաւորում	4
Այլ	2

Ընդհ. փորձառութիւն ըստ տարիներու

6 – 10 տարի	2
11 – 15 տարի	7
16 – 20 տարի	4
21 – 25 տարի	3
26 – 30 տարի	9
31 – 35 տարի	1
36 – 40 տարի	2
41 – 45 տարի	3
50 +	2

Ուսուցչական կազմը ամեն երկամսեակի աւարտին ունեցաւ դասարանային ժողովներ, տարեսկիզբին եւ տարեվերջին ընդհանուր ժողովներ եւ երկու ծնողաց ժողովներ:

5 ուսուցիչներ՝ պրն. Նժդեհ Մխսեան, տիկիններ Անգինէ Օպէյտ, Հռութ Եունիսէս, Նուարդ Ղորդորեան եւ Զարմինէ Ասմինեան հետեւեցան Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան եւ Հայկազեան Համալսարանի գործակցութեամբ կազմակերպուած 16 վարժանիստերէ բաղկացած սեմինարին, որու աւարտին՝ Յունիսին, ստացան համապատասխան վկայագիր:

Խումբ մը ուսուցիչներ 4 Ապրիլին մասնակցեցան Conflict Management in Schools նիւթով վարժանիստին (վարիչ պրն. Սամիր Քոսթանթին), իսկ 11 Մայիսին՝ Bullying in Schools նիւթով դասախօսութեան (փրոֆ. Շահէ Քազարեան):

Ամավերջի հանդէսին շքադրուեցան հանգստեան կոչուած երեք ուսուցիչներ՝ տիկ. Անի Աղպաշեան, պրն. Վազգէն Բիւզանդեան եւ պրն. Մուստաֆա Թասի իրենց երկարամեայ ծառայութեան համար, իսկ պրն. Վազգէն Մուլալեան պարգևատրուեցաւ իր ծառայութիւններուն համար, յատկապէս դպրոցի ձեռնարկներու բեմայարդարման եւ այլ աշխատանքներու համար:

Դ. ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

Գոլէճի աւետարանական դիմագիծին եւ քրիստոնէական առաքելութեան հաւատարիմ՝ այս տարի եւս ունեցանք շաբաթական երեք առաւօտեան պաշտամունքներ նախակրթարանի եւ երկրորդականի բաժիններուն համար անջատաբար, իսկ չորս պաշտամունք՝ մանկապարտէզին մէջ: Երկրորդականի աշակերտները ներկայ եղան եօթը կիրակնօրեայ պաշտամունքներու: Աշխոյժ գործունէութիւն ծաւալեց նաեւ Ս. Գիրքի ակումբը: Աշակերտներէն զգալի թիւ մը անդամակցեցաւ նաեւ Ա. եկեղեցւոյ կից գործող Պատանեաց շարժումին եւ Կիրակնօրեային:

Ե. ԱԿԱԴԵՄԱԿԱՆ ԵՒ ԱՅԼ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Լիբանանի պետական քննութիւններուն այս տարի եւս ունեցանք բացառիկ՝ հարիւր առ հարիւր յաջողութիւն. Պաքալորեայէն 2 աշակերտ, իսկ Պրէօվէի բոլոր աշակերտները արժանացան «շատ լաւ» կամ «լաւ» յիշատակութեան:

Արտադպրոցական գործունէութիւններու ընթացքին, ՀԱԳ-էն 17 աշակերտներ նուաճեցին մրցանակներ հետեւեալ մարզերուն մէջ.

Բարեկարգումի շարժումի 500-ամեակի զարգացման մրցում, Կոկիկեան հաստատութեան արաբերէնի բարձրագոյն միջին, Վանայ Ձայնի «Ծիշդ հնչենք» մրցանք, «Պզտիկ-Մզտիկ»ի «Ծիշդ գրենք»

ուղղագրութեան մրցանք, ՀՀ Կրթութեան նախարարութեան «Սարդարապատից Արցախ» շաբադրութեան մրցանք, Համագգայինի Թորոս Ռոսլին ակադեմիայի եւ ՀԲԸՄ «Խօսնակ» պաշտօնաթերթի նկարչական մրցումներ, ԼԵՎԱՄ-ի ճատրակի մրցանք:

Զ. ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱԳ Մարի եւ Բաբգէն Զանոյեան գրադարանը շարունակուեցաւ համալրուիլ նոր գիրքերով եւ պարբերականներով, որոնցմէ մաս մը կը գնուի գրադարանի պիտոճէն, իսկ մաս մըն ալ կը գոյանայ նուիրատուութիւններէ, որոնցմէ կարելի է յիշել «Գիրքի շաբաթ»-ի աշակերտական նուէրները, Համագգայինի գրատարածի նախաձեռնութիւնը, ՀՀ Սփիւռքի նախարարութեան եւ Երեւանի Պետ. Համալսարանի նուէրները: Գրադարանապետն է տիկ. Կարինէ Աճէմեան:

Է. ԳԻՏԱՇԽԱՏԱՆՈՑ

Կը գործէ բնագիտութեան, կենսաբանութեան եւ քիմիագիտութեան միացեալ գիտաշխանոցը, որ կը ծառայէ վերոյիշեալ դասերու գիտափորձերուն, առաջնորդութեամբ ուսուցիչներուն եւ գիտաշխատանոցի պատասխանատու տիկին Յասմիկ Տէմիրճեանի:

Ը. ՕԺԱՆԴԱԿ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Ծնողաց մարմին – Ըստ պետական կանոնադրութեան, այս տարի ընտրուեցաւ Ծնողաց մարմինի նոր վարչութիւն, ատենապետութեամբ տիկին Կարինէ Զոլագեանի: Մարմինը կազմակերպեց Ուսուցչաց օրուայ հիւրասիրութիւն եւ Մայրերու օրուայ նախաճաշ: Ծնողաց մարմինը տնօրէնութեան հետ յարատեւ գործակցութեամբ հետեւեցաւ աշակերտներու կրթական, ընկերային եւ կենցաղային բարօրութեան պահպանումին:

Տիկնանց օժանդակ յանձնախումբ – Յանձնախումբի տիկինները կամաւորաբար ստանձնեցին քաֆեթերիայի ծառայութիւնը, սննդարար ուտեստեղէն պատրաստելով ու վաճառելով: Սոյն գործունէութեան եկամուտը կը գործածուի աշակերտներու ընկերային եւ կենցաղային պայմաններու բարելաւման: Տարեշրջանի աւարտին, անոնք մակապարտէզի սրահը եւ առաջինէն ութերորդ դասարանները օժտեցին կախովի հովահարներով:

Տիկնանց ընկերային յանձնախումբ – Տիկին Ռուբինա Արթինեանի գլխաւորութեամբ, յանձնախումբը 2017 Սեպտեմբերէն 2018 Յուլիս կազմակերպեց 4 շրջապտոյտներ դէպի Լիբանանի տե-

սարժան եւ պատմական վայրերը: Ընդհանուր առմամբ տոյն պտոյտներուն մասնակցած են աւելի քան 400 հիւրեր:

Թ. ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆՆԵՐ

Արենամարզանքներ – Տարուան ընթացքին գոյգ բաժինները ունեցան անջատ ատենամարզանքներ, ամէն Ուրբաթ օրուան վերջին պահուն: Նշուեցան զանազան ազգային եւ համամարդկային տօներ, հիւրընկալուեցան մասնագէտներ, որոնք աշակերտներուն ներկայացուցին այլազան մանկավարժական եւ այլ նիւթեր: Եղան նաեւ ժամանցի պահեր, խաղեր, այցելութիւններ: Սոյն պահերուն իրենց գործուն մասնակցութիւնը բերին նաեւ աշակերտները, յաճախ կազմակերպելով ամբողջ ատենամարզանք մը կամ՝ բաժին բերելով:

Ակումբներ – 2017-2018 տարեշրջանին դպրոցէն ներս գործեցին Աստուածաշունչի, Հայկական, Պատմութեան եւ Կենսոլորտի ակումբները: Իրենց խորհրդատուներուն հսկողութեամբ անոնք ունեցան այլատեսակ գործունէութիւններ, ինչպէս պտոյտներ, այցելութիւններ, համագումարներ, հանդիպումներ, կազմակերպեցին ատենամարզանքներ եւ այլն:

Այցելութիւններ – Հաւատալով, որ արտադպրոցական գործունէութիւններ եւ այցելութիւններ կը լրացնեն դպրոցին մանկավարժական առաքելութիւնը, աշակերտները տարուան ընթացքին ունեցան զանազան այցելութիւններ, յատկապէս մշակութային հանդիսութիւններու:

Մարզական – Դպրոցի պասքէթպոլի խումբը մասնակցեցաւ ԼԵՎԱՄ-ի պասքէթպոլի մեծերու մրցումներուն, իսկ անհատ աշակերտներ՝ արժեթիգմի եւ ճատրակի մրցումներուն: Աշակերտներէն խումբ մը, երկրորդ տարին ըլլալով մասնակցեցաւ Պէյրութ մարաթոնին եւ Հայաստանի հանրապետութեան հարիրամեակի աշակերտական մարաթոնին:

Ժ. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՒ ԱՅԼ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Հաուրրտ Գարակէօզեան հիմնարկութեան բժիշկները դպրոց այցելութիւններով եւ Կեդրոնին մէջ աշակերտներ ընդունելով հետեւեցան անոնց աչքերու, ականներու եւ ընդհանուր առողջութեան:

Նոյն հաստատութեան ուսումնական յատուկ կարիքներու բաժանմունքը այս տարի եւս դպրոց գործողեց օրդ. Թալին Աւագեանը, որ հետեւեցաւ սորվելու եւ այլ դժուարութիւններ ունեցող քանի մը աշակերտի կարիքներուն եւ յառաջդիմութեան:

ԺԱ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Անցեալ տարեշրջանին լոյս տեսաւ «Սիփան» տարեգիրքի 2016 տարուան թիւը, «Լրատու»-ի երեք թիւեր (ԺԹ. տարի թիւ 1, 2, 3): Հրատարակութեան պատրաստուեցան նաեւ աշակերտական պարբերաթերթերէն «Գառնի»-ն, «Ձուարթնոց»-ը եւ “PEC”-ը:

ԺԲ. ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆՆԵՐ

Տիկնանց օժանդակ յանձնախումբի նուիրատութեամբ տարուան ընթացքին նորոգուեցաւ ուսուցչարանը, փայտեայ նստարաններ տեղադրուեցան շէնքի մուտքին՝ ձմեռուայ համար, մանկապարտէզէն ութերորդ դասարանները օժտուեցան հովահարներով:

Շրջանաւարտ Եղիկ Թորոսեանի ջանքերով բարեկարգումի աշխատանքներ կատարուեցան տեսչարանին եւ յարակից բաժինին մէջ:

Նախկին աշակերտ Սեդրակ Գոյումճեանի ջանքերով ամբողջովին փոխուեցան շէնքի մուտքի եւ մանկապարտէզի սրահի լամբերը:

1967-ի շրջանաւարտներու բացառիկ նուիրատութեամբ հիմնական նորոգութեան ենթարկուեցաւ 6-րդ յարկի սրահը, եւ օժտուեցաւ լսատեսողական արդիական կազմաձեւերով: Սրահը կոչուեցաւ իրենց դասարանի անունով:

ԺԳ. ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

13 Ապրիլին ծնողաց համար կազմակերպուեցաւ մանկավարժական դասախօսութիւն մը, որ ներկայացուց հոգեբան Սէլիա Սաուան, նուիրուած համակարգչային վայրագ խաղերու ժխտական ազդեցութեան:

Դպրոցի 95-ամեակին առթիւ, խումբ մը աշակերտներ, 12 Մայիսին ֆլեշմոպ մը ներկայացուցին Պէյրութ Սուքսի մէջ, պարելով հայկական պար մը: Պարուսոյցն էր ՀԱԳ-ի ծնողներէն տիկ. Մարինա Զօգիկեան:

19 Մայիսին տեղի ունեցաւ աշակերտական ստեղծագործութիւններու ցուցահանդէսին բացումը, որուն ընթացքին աշակերտներ հանդէս եկան նաեւ երգով, պարով ու նուագով:

17 Յունիսին հոգաբարձութեան հովանաւորութեամբ քօղազերծուեցաւ յուշատախտակ մը նուիրուած ՀԱԳ Տիկնանց օժ. Յանձնախումբի հիմնադիր կազմին: Նոյն օրը կատարուեցաւ բացումը 6-րդ յարկի «1967-ի շրջանաւարտներու լսատեսողական սրահ»-ին եւ յայտարարուեցաւ մեկնարկը դպրոցի կայքին՝ www.aecbeirut.edu.lb:

ԺԴ. ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍ

24 Յունիսին, պաշտամունքի ընթացքին, տեղի ունեցավ նաեւ շրջանաւարտից պաշտամունք, իսկ 30 Յունիսին՝ վկայականաց բաշխման հանդէսը: Շրջանաւարտ եղան երկրորդականի հինգ եւ նախակրթարանի հինգ աշակերտներ: 13 Յունիսին տեղի ունեցավ մանկապարտէզի հանդէսը, ուր վկայական ստացան ծաղիկ դասարանի ութ աշակերտներ:

ԺԵ. ԿՐԹԱՆՊԱՍՏ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ ԵՒ ՆՈՒՒՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Իբրեւ ոչ-շահութաբեր հաստատութիւն, ՀԱԳ-ի ամսավարկը, բացի աշակերտներէն գանձուած գումարներէն, առաւելաբար կը գոյանայ հիմնադրամներու յատկացումներով եւ նուիրատուութիւններով:

2017-2018 տարեշրջանին դպրոցը որպէս կրթանպաստ յատկացուցած է 62,600 տոլար, իսկ Հայ Աւետ. Ա. եկեղեցին՝ 1,133 տոլար: Դպրոցին ամսավարկին միայն 46 առ հարիւրը գոյացած է կրթաթոշակի եւ այլ գանձումներէ: Մնացեալը նուիրատուութիւններ եւ յատկացումներ են:

Հայ Աւետ. Ա. եկեղեցին, իբրեւ դպրոցի սեփականատէր, միշտ ալ նեցուկ կանգնեցաւ, հոգալով անոր նիւթական պակասուողը:

Դպրոցին զանազան կարիքներուն համար հաստատուած են հետեւեալ յատուկ հիմնադրամները կամ տարեկան յատկացումները.

ՀԱԳ 80-ամեակի հիմնադրամ (Հայ Աւետ. Ա. եկեղեցի), նախկին աշակերտ, բարերար Ռաֆֆի Մանուկեանի յարկացում, նախկին աշակերտ բարերար Հրաչ Սիսեռեանի յարկացում ի յիշատակ իր ծնողաց՝ Գեղամ եւ Ալիս Սիսեռեանի, շրջանաւարտ Կորթ. Նազարէթ Տարաքեան, ՀԲԸՄ Զ. Մարգարեան մրցանակ, նախկին աշակերտ Կորթ Սարգիս Սիմիթեան, Բիւզանդ եւ Սարգիս Հասրճեան հիմնադրամ, Արա Պալեան կրթական հիմնադրամ, Զաւէն Մարգարեան Կրթական Հիմնադրամ, Կարապետ Զոլագեան, Եղիսարէթ Ծանծիկեան, Ասապուր Կիւսեռեան, Մարի Կէօքլէօզեան, Դանիէլ Շնորհոքեան, Օլիվիա Հապիպ, Գրիգոր Պողարեան, Խաչեր Գալուստեան, Կորթ. Բարգէն Մկրտիչեան, Անահիտ Կիւսեռեան, Մարիամ Քաթմերեան, Էօթէն եւ Նազելի Էքմէքճի, Կորթ. Եղիազար եւ Եսթեր Շիրաճեան, Ֆերիտ Սալիպեան, Երուանդ Էքմէքճի, Եղիշէ Մանուկեան, Պապրիկ Աֆէեան, Ալիս Սիսեռեան հիմնադրամները եւ Կորթ. Ճորճ Էքմէքճի առողջապահական ֆոնդը:

ԱՄՆ Արեւմտ. Ափի Շրջանաւարտից միութեան մէջ հաստատուած են Ալպեր եւ Թէրի Պեզճեան եւ Տիգրան Ապաճեան հիմնադրամները:

Դպրոցին տարեկան յատկացումներ կը կատարեն նաեւ Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը, Գալուստ Կիւպէնկեան Հիմնարկութիւնը, Lebanese Ladies Cultural Society-ն, Wider Church Ministry-ն, Սրեփան Փիլիպոսեան հիմնադրամը, ՄՏԿ Կաթողիկոսութեան Ժիրայր եւ Արշալիր Մանուկեան հիմնադրամը, ԱՖՀԻԼ-ը, Ծիածան մանկամսուրը, Մարաշի եւ Համախարքերոցիական հայրենակցական միութիւնները:

Հաստատուած են նաեւ հետեւեալ նիւթական մրցանակները, որոնք կը շնորհուին տուեալ բնագաւառին մէջ առաջադիմութիւն արձանագրած աշակերտներու.

Ուսումնական աչքառու յառաջդիմութեան, արտադպրոցական բացառիկ յաջողութեան եւ յարուկ տաղանդի մէկական մրցանակ՝ իւրաքանչիւրը հազար տոլար (Բարերար Ռաֆֆի Մանուկեան), Տիպար Աշակերտի Կորթ. Ճորճ եւ Լիւսի Էքմէքճի մրցանակ (ՏՏ Ժագ Էքմէքճի, ՏՏ Ֆրեւտի Էքմէքճի, ՏՏ Ճորճ Գասարճեան, ՏՏ Սեմիր Հերմեզ), Սուրբ Գրիգորի Հայ Աւետ. Ա. եկեղեցիի մրցանակ (Հայ Աւետ. Ա. եկեղեցւոյ հոգաբարձութիւն), Հայերէնի Մկրտիչ եւ Սաթենիկ Մարգարեան մրցանակ (պրն. Հայկ Մարգարեան), Երկրորդական բաժնի դասարանի առաջնութեան մրցանակ (ՏՏ Գէորգ Գէորգեան), Արաքերէնի Ազար Հալպեան մրցանակ (տիկ. Յասմիկ Հալպեան), Արաքերէնի Երուանդ Էքմէքճի մրցանակ (Էքմէքճի ընտանիք), Անգլերէնի Աւետիս Լոշիաճեան մրցանակ (պրն. Ճորճ Լոշիաճեան), Թուրքական Երուանդ եւ Վարդուի Լոշիաճեան մրցանակ (պրն. Ճորճ Լոշիաճեան), Բնագիտութեան Շուշան Գալայեան մրցանակ (փրոֆ. Յարութիւն Գալայեան), Քիմիագիտութեան Միհրան, Թունա, Յուսիկ եւ Ասպետ Տօնապետեան մրցանակ (տիկ. Լորիս Տօնապետեան), Պապմութեան Տիգրան Ապաճեան մրցանակ (պրն. Ժագ Ապաճեան), Կենսաբանութեան փրոֆ. Լեւոն Պապիկեան մրցանակ (ՏՏ Տոնալտ Պապիկեան), Քաղաքացիական կրթութեան Աւետիս եւ Նորա Մենէշեան մրցանակ (Ժիլպէր, Ռոպէր եւ Մարի-Լուիզ Մենէշեաններ), Ընդհանուր Զարգացման փրոֆ. Յարութիւն Գալայեան մրցանակ (տիկ. Շուշան Սամման), Երկրորդական բաժնի թուրքական բարձրագոյն նիշի Ռիպա Իրանի մրցանակ (պրն. Փօլ Քարլոզեան), Տարուայ մարզիկի դոկտ. Ոսկան Ամբարճեան մրցանակ (տիկ. Ռիթա Ամբարճեան), Հայոց Պապմութեան Արսինէ Մելիքոնեան մրցանակ (տիկ. Վեհան Պետիքեան), Ֆրանսերէնի մրցանակ (օրդ. Աստղիկ Փափազեան), Տնտեսագիտութեան Սարգիս Հասրճեան մրցանակ (տիկ. Թենի Հասրճեան եւ զաւակունք), Շարադրութեան

Արդաշէս Տէր Խաչատուրեան մրցանակ (SS Յովիկ եւ Սիլվա Ներսէսեան), Երաժշտութեան Սոնա Ահարոնեան մրցանակ (SS Արմէն եւ Լենա Իւրէշլեան), Նախակրթարանի հայագիտական նիւթերու Եւփիմէ Տէր Մինասեան մրցանակ (SS Յակոբ Շնորհոքեան), Գծագրութեան մրցանակ (տիկ. Շաքէ Արսլանեան), Համակարգիչի Անդրանիկ Պապիկեան մրցանակ (պրն. Թորոս Պապիկեան):

...

2017 Յուլիսէն 2018 Սեպտեմբեր տարեշրջանի ընթացքին եղան հետեւեալ նուիրատութիւնները, կամ ուղղակիօրէն դպրոցին, կամ ԱՄՆ Արեւմտ. Ափի շրջանաւարտից միութեան ճամբով:

Տարեկան յարկացումներ ____ (Ամերիկեան տոլար)

Բարերար Ռաֆֆի Մանուկեան (Անգլիա)	14,200
Բարերար Հրաչ Սիսեռեան (Ֆրանսա)	15,000
տոքթ. Նազարէթ Տարաքեան (ԱՄՆ)	10,000
(2 տարրուան համար)	
Բիւզանդ եւ Սարգիս Հասըրճեաններու ընտանիքներ	466
ՀԲԸՄ Զ. Մսըրլեան մրցանակ	2500

Զաւէն Մսըրլեան Կրթական Հիմնադրամին _____ (Ամերիկեան տոլար)

Բարերար Ռաֆֆի Մանուկեան (Անգլիա) 50,000, Բարերար Հրաչ Սիսեռեան (Ֆրանսա) 10,000, SS Տէյվիտ եւ Մարկրէթ Մկրուպլեան (ԱՄՆ) 5000, պրն. Վիգէն Գարճեան (ԱՄՆ) 1500, տոքթ. եւ տիկ. Ռաֆֆի եւ Շաղիկ Յովհաննէսեան (ԱՄՆ) 1000, պրն. Շահէ Խաչատուրեան (Լիբանան) 1000, պրն. Սարգիս Պետեւեան 1000, Ստեփան Փիլիպոսեան հիմնարկութիւն 1000, պրն. Սարգիս Եագուպեան (Գանատա) 500, տիկ. Սոնա Թորոյեան (Իտալիա) 500, պրն. Ներսէս Տերմենճեան (ԱՄՆ) 500, տիկ. Արփի Շնորհոքեան-Սարեան (ԱՄՆ) 500, SS Զարեհ եւ Յասմիկ Մահսերեճեան (ԱՄՆ) 500, տիկ. Հիլտա Քիւրճեան-Յարութիւնեան (ԱՄՆ) 500, տիկ. Անայիս Պարսումեան (ԱՄՆ) 500, պրն. Վարդգէս Աբելեան (ԱՄՆ) 500, տիկ. Զենա Վուլնո-Գասպարեան (Լիբանան) 500, տիկ. Լենա Պաթմանեան-Գիլիսանճեան (Անգլիա) 327, տիկ. Սիլվա Պարութեան-Թաշճեան (ԱՄՆ) 300, պրն. Փօլ Քարլոզեան (ԱՄՆ) 300, պրն. Ճորճ Տապալաղ (ԱՄՆ) 300, SS Ասպետ եւ Անայիս Գրանեան (ԱՄՆ) 300, պրն. Յարութ Տէր Դաւիթեան (ԱՄՆ) 300, պրն. Ֆիլիփ Թրփանճեան (ԱՄՆ) 300, պրն. Զար-

մայր Սեդրակեան (ԱՄՆ) 250, տիկ. Սոնա Աֆարեան-Փանոսեան (Գանատա) 200, տիկ. Անահիտ Քիլճեան-Փոլատեան (Լիբանան) 200, տիկ. Յասմիկ Հալէպլեան (ԱՄՆ) 200, տոքթ. եւ տիկ. Վիգէն եւ Սոսի Ահարոնեան (ԱՄՆ) 200, պրն. Ռաֆֆի Աբոշեան (ԱՄՆ) 200, SS Շահէ եւ Լետա Գրագիրեան (ԱՄՆ) 200, պրն. Գէորգ Ճէպլճեան (Լիբանան) 200, SS Մորիս եւ Պերճուի Կիլեսերեան (ԱՄՆ) 200, տիկ. Արփի Պչաքճեան-Սանսուր (ԱՄՆ) 200, պրն. Յարութ Ներսէսեան (Հայաստան) 200, պրն. Համբիկ Գէորգեան (Անգլիա) 150, պրն. Սարգիս Վահրատեան (Պէյրութ) 134, տիկ. Սեդա Պասմանճեան-Տէրեան (Գերմանիա) 100, տիկ. Մարի Յովսէփեան-Աղոյեան (ԱՄՆ) 100, տիկ. Արեգ Գազանճեան-Մոմճեան (ԱՄՆ) 100, տիկ. Անի Պասմանճեան-Արոյեան (ԱՄՆ) 100, տիկ. Անահիտ Թութիկեան-Մէյմարեան (ԱՄՆ) 100, տիկ. Անի Վարժապետեան-Իսկէնտերեան (ԱՄՆ) 100, պրն. Միւր Տօնապետեան (ԱՄԷ) 100, տիկ. Սոնա Մատենլեան (ԱՄՆ) 100, պրն. Յովիկ Ստեփանեան (Հայաստան) 100, տիկ. Շուշան Գալայեան-Սամման (ԱՄՆ) 100, պրն. Մայք Տիշաքճեան (ԱՄՆ) 100, պրն. Պետիկ Գահվճեան (Գանատա) 92, SS Վահէ եւ Սինթիա Թովմասեան (Աւստրալիա) 70, պրն. Համբիկ Գէորգեան (Անգլիա) 66, տիկ. Մելինէ Մերճանեան (ԱՄՆ) 50, SS Սարգիս եւ Նելլի Զուռնանճեան (Աւստրալիա) 33:

«Սիփան»-ին եւ «Լրապոս»-ին ____ (Ամերիկեան տոլար)

Տիկ. Նորա Զաղլասեան-Էքմէքճի (Լիբանան) 200, SS Ատրուշան եւ Նորա Արմէնեան (ԱՄՆ) 200, տոքթ. Վարդգէս Նաճարեան (ԱՄՆ) 200, տիկ. Շաքէ Միսճեան (ԱՄՆ) 200, պրն. Յարութ Միսիրեան (Լիբանան) 100, տիկ. Անի Արոյեան (ԱՄՆ) 100, տոքթ. Հրայր Կարապետեան (ԱՄՆ) 100, պրն. Արաիւս Սաղտճեան (ԱՄՆ) 100, տիկ. Սոնա Սարաֆեան (Գանատա) 100, պրն. Ներսէս Տերմենճեան (ԱՄՆ) 100, տիկ. Շուշան Սամման (ԱՄՆ) 100, SS Վահէ եւ Սինթիա Թովմասեան (Աւստրալիա) 35, տիկ. Մարի Աղոյեան (ԱՄՆ) 25:

«1967-ի շրջանաւարտներու լսարեստողական սրահ»-ի վերանորոգութեան համար _____ (Ամերիկեան տոլար)

Պրն. Ատոմ Թնճուկեան (Լոնտոն) 2000, տոքթ. Վիգէն Փուլիկեան (ԱՄՆ) 1500, պրն. Կարօ Գասարճեան (ԱՄՆ) 1300, տիկ. Նայիրի Պուպուսիս (ԱՄՆ) 1300, տոքթ. Վիգէն Ահարոնեան (ԱՄՆ) 1300 տոլար, տիկ. Սիւզան Պուլաքլեան (ԱՄՆ) 1000, պրն. Միւր Հիւսէնճեան (ԱՄՆ) 1000, պրն. Սամուէլ Շնորհոքեան (Փարիզ) 1000, SS Յովիկ եւ Սիլվա Ներսէսեան (Յունաստան) 1000, պրն. Աշոտ

Ճերահեան (Գանատա) 500, պրն. Արա Յովհաննեսան (Լիբանան) 500, տիկ. Տալիտա Վարդանեան (Զուիգերիա) 400, տիկ. Անի Արոյեան (ԱՄՆ) 300:

«ՀԱԳ Արա Պալեան կրթական հիմնադրամ»-ին _____

Տիկին Սուսի Պալեան, տիար Արմեն Պալեան, տոքթ. Արման եւ դոկտ. Արաքս Գրիգորեան, պրն. Ալեք եւ դոկտ. Շողակ Պալեան, օրիորդ Արշակունիի եւ Լուսին Տէր Խաչատուրեաններ՝ 750,000 լ.ո.

Այլ նուիրատուութիւններ _____

Մարի Յովհաննեսան-Թիւթիւնճեանի յիշատակին՝ Ռաֆֆի եւ Շողիկ Թիւթիւնճեաններ (ԱՄՆ) 500,000 լ.ո., իբրեւ գրականութեան մրցանակ:

Տիկ. Հուրի Այանեան-Գոնիալեանի յիշատակին որպէս 9 աշակերտի կրթանապաստի յատկացում՝ 2700 տոլար 1977-ի աւարտական կարգի իր

դասընկերներէն՝ Վիգէն Տագէսեան (ԱՄՆ), Ռաֆֆի Ճահիլեան (ԱՄՆ), Եղիշէ Մինասեան (ԱՄՆ), տոքթ. Անդրանիկ Փոլատեան (ԱՄՆ), տոքթ. Հրայր Շահինեան (ԱՄՆ), Լեւոն Աֆէեան (ԱՄՆ), Սարգիս Եագուպեան (ԱՄՆ), Վիվիան Քարփ (ԱՄՆ), Ռիմա Պիշուֆի (ԱՄՆ) եւ Սանտրա Պալուզեան (ԱՄՆ):

Օրդ. Արին Պաղտոյեանի (2010-ի շրջ.) եւ պրն. Յակոբ Քերքեզեանի, ինչպէս նաեւ օրդ. Ալին Արթինեանի (2011-ի շրջ.) եւ պրն. Հայկ Զիֆթճեանի պատկառութեան առթիւ ՀԱԳ-ի անձնակազմը 250.000 լ.ո. դպրոցի կրթանապաստի ֆոնտին:

Շրջանաւարտ մը՝ կրթանապաստի ֆոնտին՝ 2000 տոլար: Պրն. Համբարձում Թերզեան՝ (Լիբանան) 1000 տոլար: Տիկ. Յասմիկ Հալեպեան (ԱՄՆ) 150 տոլար: Տիկ. Անահիտ Գոգորեան-Պետիկեան (Ֆրանսա) 100 եւրո: Նախկին աշակերտներ ճորճ եւ Վարդ-Վարս Մկրտիչեան 100 տոլար:

Ա.Ի.

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Շնորհակալութիւն կը յայտնենք բոլոր բարերարներուն, ի մասնաւորի տեարք Ռաֆֆի Մանուկեանին եւ Հրաչ Սիսեռեանին, տոքթ. Նազարէթ Տարաքճեանին, ինչպէս նաեւ Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան, Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան, Lebanese Ladies Cultural Society-ին ու հետեւեալ մարմիններուն, կազմակերպութիւններուն եւ անհատներուն, որոնք տարբեր ձեւերով աջակից եւ գործակից եղան տնօրէնութեան աշխատանքներուն, նպաստելով դպրոցի հեզասահ ընթացքին, յաջողութեան եւ վերելքին.

Հայ Աւետ. Ա. Եկեղեցւոյ հովիւ, հոգաբարձութիւն եւ խնամակալութիւն,

ՀԱԳ Հոգաբարձութիւն, Ծնողաց, Տիկնանց ընկերային եւ Տիկնանց օժանդակ մարմիններ,

Ուսուցչական կազմ եւ պաշտօնէութիւն,

ԱՄՆ Արեւմտ. Ափի Շրջանաւարտից Միութիւն,

Հայկազեան Համալսարան,

Ռատիօ Սեւան:



Վերամուտ 2017-2018





Պէյրու՝ Մարաթոն
2017



Գիրքի Շաբաթ





Ծաղկեպսակ՝
Մեծ Եդեռնի զոհերուն յիշատակին

Photo by Markar



Զբոսանք





«Արի պարենք Քոչարի»



«Փծիծ»-ի հետ



Վերջին շաւգ



ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՒԼԵՃ

Սեփականություն ՀԱՅ ԱՒԵՏ. Ա. ԵԿԵՂԵՑԻ

Մեքսիք փողոց, Պեյրուք - Լիբանան

2017 - 2018 կրթական տարեշրջանի
ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆԿԱԶՄԸ

Վեր. ՀՐԱՅՐ ԶՈԼԱԳԵԱՆ
Պրն. ՆԵՐՍԵՍ ՊԱՂՏՈՅԵԱՆ
Պրն. ՅԱԿՈԲ ՏԵՄԻՐՃԵԱՆ
Պրն. ՃՈՆԻ ՍԱՅԻԼԵԱՆ
Պրն. ՀՐԱԶ ՀԱՍԸՐՃԵԱՆ

(նախագահ)
(ատենապետ)
(փոխատենապետ)
(գանձապահ)
(խորհրդական)



Ձախեն աջ՝

Պրն. ՃՈՆԻ ՍԱՅԻԼԵԱՆ, Պրն. ՅԱԿՈԲ ՏԵՄԻՐՃԵԱՆ, Դոկտ. ԱՐՄԵՆ
ԻՐԻՆԵՇԼԵԱՆ, Պրն. ՆԵՐՍԵՍ ՊԱՂՏՈՅԵԱՆ, Պրն. ՀՐԱԶ ՀԱՍԸՐՃԵԱՆ,
Վեր. ՀՐԱՅՐ ԶՈԼԱԳԵԱՆ



ARMENIAN EVANG. COLLEGE

Mexique Street
P.O.Box 11-3672
RIAD EL SOLH BEIRUT 1107 2140
LEBANON
Tel. (01) 34 98 16

E-mail: secretary@aecbeirut.com.lb

www.aecbeirut.com.lb

المدرسة الارمنية الانجيلية العالية

شارع المكسيك
ص.ب. ١١-٣٦٧٢
رياض الصلح بيروت ١١٠٧ ٢١٤٠
لبنان
هاتف: ٣٤٩٨١٦ (٠١)

بريد الكتروني: secretary@aecbeirut.com.lb

www.aecbeirut.com.lb

